

4361

ՆԱԿԱՆ

ԿՈՍՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ

(Բաղժեմիկներ)

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր Ը

3 6 4

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3 K 0

2-22

ԵՐԱՅԵՐԱՅԵՐԱՅԵ

Յ Ե Ր Ե Գ Ա Ն 1928



3K7  
2-22

uy

14 NOV 2009

11 JUL 2005

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (Բայլեվիկների)

Ժ ր ա գ ի ր ը

Յ Ե Վ

1003  
13820

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը



Թ Ե Ր Ե Վ Ա Ն - 1928

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (Բայլշէկների)

Ծ Ր Ա Գ Ի Ր Ը

(Ընդունված կուսակցության 8-րդ համա-  
գումարում, 18—23 մարտի 1919 թ.)

Ռուսաստանի Հոկտեմբերյան հեղափո-  
խությունը (25-ն հոկտեմբերի — 7-ն նոյեմ-  
բերի 1917 թվի) իրագործեց պրոլետարիատի  
դիկտատուրան: Չբավոր գյուղացիության  
կամ կիսապրոլետարիատի ոգնությունը  
պրոլետարիատն սկսեց կոմունիստական  
հասարակության հիմքերը կառուցել: Հեղա-  
փոխության զարգացման ընթացքը Գեր-  
մանիայում յեվ Ավստրո-Հունգարիայում,  
պրոլետարիատի հեղափոխական շարժման  
անումը բոլոր առաջավոր յերկրներում,

Գրառեպոար 839 բ. 5. 809. Տիրաժ 3000

Պետհրատի 2-րդ տպարան Յերևանում—պ. 868

այդ շարժման խորհրդային ձեւի տարածումը, այսինքն այն ձեւի, վորի անմիջական նպատակն է պրոլետարիատի ղեկատարայի իրագործումը,—այս բոլորը ցույց տվեց, վոր սկսվել է համաշխարհային պրոլետարական, կոմունիստական հեղափոխությա ն դարաշրջանը:

Այդ հեղափոխությունն անխուսափելի արդյունք եր կապիտալիզմի զարգացման, վորը ղեռնվա տիրապետում է բաղաբակիր յերկրների մեծ մասում: Կապիտալիզմի յեւ բուրժուական հասարակության եյությունը մեր հին ծրագիրը նշտորեն—յեթե նհաշվենք կուսակցության անհիշտ սոցիալ-դեմոկրատական անունը,—ընորոշել է հետեւյալ առաջադրություններով:

«Այդ հասարակության գլխավոր հատկանիշն է ապրանքային արտադրությունը՝ հիմնված կապիտալիստական արտադրական հարաբերությունների վրա, վորտեղ ապրանքների յեւ արտադրության միջոցների շրջանառության ամենից կարեւոր յեւ

նշանակալից մասը պատկանում է քանակով փոքրաթիվ մի դասակարգի. մինչդեռ պրոլետարիատը յեւ կլիսապրոլետարիատը, վոր բնակչության խոշոր մեծամասնությունն է կազմում, իրենց տնտեսական դրությամբ ստիպված են շարունակ կար պարբերաբար վաճառել իրենց բանվորական ուժը, այսինքն կապիտալիստների վարձկանը դառնալ յեւ իրենց աշխատանքով հասարակության վերին դասակարգերի յեկամուտն ստեղծել:

«Կապիտալիստական արտադրական հարաբերությունների տիրապետության շրջանըն ավելի յեւ ավելի յե ընդլայնվում, վորչափ տեխնիկայի մշտական կատարելագործումը՝ բարձրացնելով խոշոր ձեռնարկությունների տնտեսական նշանակությունը, դուրս է մղում մանր ինքնուրույն ձեռնարկողներին՝ նրանց մի մասին պրոլետար դարձնելով, մնացածների դերը սահմանափակելով հասարակական-տնտեսական կյանքում յեւ տեղ-տեղ նրանց թիւ թե շատ լիակատար,

քիչ թե շատ բացահայտ, քիչ թե շատ ծանր կախման մեջ դնելով կապիտալից:

«Բացի այդ՝ նույն տեխնիկական պրոգրեսը հնարավորութուն է տալիս ձեռնարկողներին միշտ ավելի մեծ չափով կիրառել կանանց յեվ յերեխաներին աշխատանքն ապրանքների արտադրության շրջանառության պրոցեսում: Իսկ վորովհետեւ, մյուս կողմից, ձեռնարկողների մոտ նա հարաբերաբար նվազեցնում է բանվորական կենդանի ուժի կարիքը, բանվորական ուժի պահանջն անհրաժեշտաբար յետ է մնում նրա առաջարկից: Այս պատճառով ել աճում է վարձու աշխատանքի կախումը կապիտալից, յեվ բարձրանում է նրա շահագործման աստիճանը

«Իրերի այս դրությունը բուրժուական յերկրների ներսում յեվ նրանց մշտապես սրվող փոխադարձ մրցությունը համաշխարհային շուկայում միշտ ավելի ու ավելի յեն դժվարացնում ապրանքների վաճառքը, վորոնք շարունակ աճող քանակով են ար-

տադրվում: Գերարտադրությունը, — վոր յերեվան է գալիս քիչ թե շատ սուր արդյունաբերական ճգնաժամերի մեջ, վորոնց հետեւում են արդյունաբերության լճացման (засто́й) քիչ թե շատ տեվական շրջաններ, — բուրժուական հասարակության արտադրողական ուժերի զարգացման անխուսափելի հետեվանքն է: Ծգնաժամերը յեվ արդյունաբերության լճացման շրջաններն իրենց հերթին ավելի յեվս կործանում են մանր արտադրողներին, ավելի յեվս ուժեղացնում են վարձու աշխատանքի կախումը կապիտալից, ավելի յեվս արագացնում բանվոր դասակարգի դրության հարաբերական, իսկ յերբեմն ել բացարձակ վատթարացումը:

«Այսպիսով տեխնիկայի կատարելագործումը, վոր աշխատանքի արտադրողականության ավելացումն ու հասարակական հարստության աճումն է նշանակում, բուրժուական հասարակության մեջ իր հետ միասին առաջ է բերում հասարակական

անհավասարության աճում, ունեւորներով յեւլ չունեւորների միջեւ յեղած տարածության մեծացում յեւլ աշխատավոր մասսաների եւ ավելի լայն խավերի համար ապրուստի անապահովություն, անգործություն ու բազմատեսակ զրկանքների շատացում:

«Բայց բուրժուական հասարակությանը հատուկ այս բոլոր հակասությունների աճումին ու զարգացմանը համաչափ՝ աճուր եւ նայեւլ աշխատավոր յեւլ շահագործվող մասսայի դժգոհությունը տիրող կարգերից, աճում եւ պրոլետարների թիւին ու համերաշխությունը յեւլ սրվում եւ նրանց պայքարն իրենց շահագործողների դեմ: Միյեւլնույն ժամանակ տեխնիկայի կատարելագործումը, համակենտրոնացնելով արտադրության յեւլ շրջանառության միջոցները յեւլ հանրայնացնելով աշխատանքի պրոցեսը կապիտալիստական ձեռնարկություններում ավելի յեւլ ավելի արագ նյութական հնարավորություն եւ ստեղծում կապիտալիստական

արտադրական հարաբերությունները կոմունիստականով փոխարինելու համար, այսինքն՝ հնարավոր ե զարձնում այն սոցիալակա՞ն հեղափոխությունը, վորը միջազգային կոմունիստական կուսակցության՝ վորպես դասակարգային շարժման գիտակից արտահայտի՝ ամբողջ գործունեյության վերջնական նպատակն ե կազմում:

«Փոխարինելով արտադրության յեւլ շրջանառության միջոցների մասնավոր սեփակւնությունը հասարակականով յեւլ հասարակական-արտադրական պրոցեսսի պայնաչափ կազմակերպություն մտցնելով հասարակության բոլոր անդամների բարեկեցությունն ու բազմակողմանի զարգացումն ապահովելու համար՝ պրոլետարիատի սոցիալական հեղափոխությունը կվոչնչացնի հասարակության դասակարգային բաժանումը յեւլ դրանով կազատագրի ենշված ամբողջ մարդկությունը, բանի վոր վերջ կդնի հասարակության մի մասը մյուսի կողմից հարստահարելու բոլոր ձեւերին:

«Սոցիալական այս հեղափոխութեան անհրաժեշտ պայմանը պրոլետարիատի դիկտատուրան եւ, այսինքն պրոլետարիատի ձեռքով քաղաքական մի այնպիսի իշխանութիւն նվաճելը, վոր նրան հնարավորութիւն կտա ճնշելու շահագործողներին ամեն մի դիմադրութիւն: Նպատակ դնելով իրեն՝ ընդունակ դարձնել պրոլետարիատին իրագործելու պատմական իր մեծ կոչումը, միջազգային կոմմունիստական կուսակցութիւնը կազմակերպում եւ նրան վորպես բոլոր բուրժուական կուսակցութիւններին հակադէր ինքնուրույն քաղաքական կուսակցութիւն, ղեկավարում եւ նրա ըզմանդակ պայքարը, մերկացնում նրա առջեւ շահագործողների յեւ շահագործվողների շահերի անհաշտ հակադրութիւնը յեւ պարզաբանում եւ նրան առաջիկա սոցիալական հեղափոխութեան պատմական նշանակութիւնն ու անհրաժեշտ պայմանները: Իրա հետ միասին՝ նա յերեւման եւ հանում մնացած աշխատավոր յեւ շահագործվող

վողը մասսայի առջեւ նրա դրութեան անհուսալիութիւնը կապիտալիստական հասարակութեան մեջ յեւ սոցիալական հեղափոխութեան անհրաժեշտութիւնը հանուն նրա սեփական ազատագրման կապիտալի ճնշումից: Բանվոր դասակարգի կուսակցութիւնը՝ կոմմունիստական կուսակցութիւնը դեպի իր շարքերն եւ կոչում աշխատավոր յեւ շահագործվող բոլոր խավերին, վորչափով նրանք պրոլետարիատի տեսակետի վրա յեն անցնում»:

Կապիտալի համակենտրոնացման յեւ կենտրոնացման պրոցեսը, վոչնչացնելով ազատ մրցումը, XX դարի սկզբին հանգեց կապիտալիստների հզոր մենաշնորհային միութիւններին՝ սինդիկատների, կարտելների, տրեստների կազմակերպման, վոր վեռական նշանակութիւն ստացաւ ամբողջ տնտեսական կյանքում, միախառնեց բանկային յեւ արդյունաբերական կապիտալը, ահագին չափերով համակենտրոնացրեց կապիտալը յեւ զարկ տվեց կապի-

տալի ուժգին արտահանմանը դեպի ոտար  
 յերկրներ: Տրեստներն՝ ընդգրկելով կա-  
 պիտալիստական պետությունների ամբողջ  
 խմբեր, ձեռնարկեցին աշխարհի տնտեսա-  
 կան վերաբաժանմանը, վորն ամենահարուստ  
 յերկրների միջեւ տերրիտորիալ գծով արդեն  
 իսկ բաժանված եր: Ֆինանսական կապի-  
 տալի այդ դարաշրջանը, վոր կապիտալիս-  
 տական պետությունների միջեւ մղվող պայ-  
 քարին անխուսափելիորեն ավելի սուր  
 բնույթ ե տալիս, իմպերիալիզմի դարաշրջ-  
 անն ե:

Այստեղից անխուսափելիորեն բղխում են  
 իմպերիալիստական պատերազմներ, պա-  
 տերազմներ վաճառաշուկաների, կապիտալի  
 գործադրության շրջանների, հում նյութերի  
 յեւ բանվորական ուժի համար, այսինքն՝  
 համաշխարհային տիրապետության յեւ  
 մանր ու թույլ ժողովուրդների վրա իշխե-  
 լու համար: Հենց այդպիսի բնույթ ունի  
 1914—18 թ.թ. առաջին մեծ իմպերիալիս-  
 տական պատերազմը: Յեւ համաշխարհային

կապիտալիզմի զարգացման չափազանց  
 բարձր աստիճանն ընդհանրապես, յեւ ազատ  
 մրցման փոխարինումը պետական-մենաշնոր-  
 հային կապիտալիզմով, յեւ՝ արդյունքների  
 արտադրության ու բաշխման պրոցեսի  
 հասարակական կարգավորման ապարատ  
 ստեղծվելը բանկերի, ալլել՝ կապիտալիստ-  
 ների միությունների միջոցով, յեւ կապիտա-  
 լիստական մենաշնորհներին հետեւող թան-  
 գության անման ու սինդիկատների անող  
 մնշումը բանվոր դասակարգի վրա, սրա  
 նորտացումն իմպերիալիստական պետու-  
 թյան միջոցով, պրոլետարիատի տնտեսա-  
 կան յեւ քաղաքական պայքարի անազին  
 դժվարացումը, յեւ իմպերիալիստական պա-  
 տերազմի ծանր թշվառությունների ու  
 փլուզումի սարսափները, — այս ամենն ան-  
 խուսափելի յե դարձրել կապիտալիզմի  
 կործանումը յեւ նրա փոխանցումը հասա-  
 րակական տնտեսության մի ավելի բարձր  
 տիպարի:

Իմպերիալիստական պատերազմը չեր

կարող վերջանալ վոչ միայն արդար հաշտությամբ, այլև՛ ընդհանրապես բուրժուական կառավարությունների միջեւ կնքած բիչ թե շատ կայուն խաղաղության դաշնագրով: Կապիտալիզմի զարգացման արդի աստիճանի վրա նա անխուսափելիորեն վերածվեց յեւ վերածվում է մեր աչքի առաջ շահագործվող աշխատավոր մասսաների յեւ նրանց գլուխն անցած պրոլետարիատի քաղաքացիական պատերազմի՝ ընդդեմ բուրժուազիայի:

Պրոլետարիատի աճող գործը յեւ մանավանդ նրա հաղթություններն առանձին յերկրներում, ուժեղացնում են շահագործողների դիմադրությունը յեւ առաջ են բերում կապիտալիստների միջազգային միության նոր ձեւեր (Ազգերի Լիգա յեւ այլն): Համաշխարհային մասշտաբով կազմակերպելով յերկրագնդի բոլոր ժողովուրդների սիստեմատիկ շահագործումը, կապիտալիստների այդ միությունները նախեւ առաջ բոլոր յերկրների պրոլետարի-

ատի հեղափոխական շարժումների անմիջական ենչման գործին են ձեռնարկում: Առանձին պետությունների ներսում այս բոլորն անխուսափելիորին միացնում են քաղաքացիական կռիվը թե պաշտպանվող պրոլետարական յերկրների յեւ թե իմպերիալիստական պետությունների լծի տակ ենչված ժողովուրդների հեղափոխական պատերազմների հետ:

Խաղաղության, կապիտալիզմի տիրապետության ներքո միջազգային զինաթաման միջնորդ դատարանների յեւ այլն նշանաբաններն այս պայմաններում վոչ միայն ունակցիոն ուտոպիա յեն, այլև՛ աշխատավորներին խաբելու միջոց, վսրով կապիտալիստները ձգտում են զինաթափել պրոլետարիատին յեւ նրան հեռու պահել իր շահագործողներին զինաթափելու գործից:

Միայն պրոլետարական կոմունիստական հեղափոխությունը կարող է հանել մարդկությունն իմպերիալիզմի յեւ իմպե-

կարող վերջանալ վոչ միայն արդար հաշ-  
տությամբ, այլև ընդհանրապես բուր-  
ժուական կառավարությունների միջեւ  
կնքած բիչ թե շատ կայուն խաղաղության  
դաշնագրով: Կապիտալիզմի զարգացման  
արդի աստիճանի վրա նա անխուսափելի-  
որեն վերածվեց յեւ վերածվում է մեր  
աչքի առաջ շահագործող աշխատավոր  
մասսաների յեւ նրանց գլուխն անցած  
պրոլետարիատի բաղաբացիական պատե-  
րագամի՝ ընդդեմ բուրժուազիայի:

Պրոլետարիատի անող գործը յեւ մանա-  
վանդ նրա հաղթություններն առանձին  
յերկրներում, ուժեղացնում են շահագր-  
ծողների դիմադրությունը յեւ առաջ են  
բերում կապիտալիստների միջազգային  
միության նոր ձևեր (Ազգերի Լիգա յեւ  
այլն): Համաշխարհային մասշտաբով կազ-  
մակերպելով յերկրագնդի բոլոր ժողովուրդ-  
ների սխտեմատիկ շահագործումը, կա-  
պիտալիստների աչդ միությունները նախ  
եւ առաջ բոլոր յերկրների պրոլետարի-

ատի հեղափոխական շարժումների անմի-  
ջական ենշման գործին են ձեռնարկում:  
Առանձին պետությունների նեքսում այս  
բոլորն անխուսափելիորին միացնում են  
բաղաբացիական կռիվը թե պաշտպանվող  
պրոլետարական յերկրների յեւ թե իմպե-  
րիալիստական պետությունների լծի տակ  
ենշված ժողովուրդների հեղափոխական  
պատերազմների հետ:

Սաղաղության, կապիտալիզմի տիրա-  
պետության ներքո միջազգային զինաթափ-  
ման միջնորդ դատարանների յեւ այլն  
նշանաբաններն այս պայմաններում վոչ  
միայն ռեակցիոն ուտոպիա յեն, այլև  
աշխատավորներին խաբելու միջոց, վորով  
կապիտալիստները ձգտում են զինաթափել  
պրոլետարիատին յեւ նրան հեռու պահել  
էր շահագործողներին զինաթափելու գոր-  
ծից:

Միայն պրոլետարական կոմունիստա-  
կան հեղափոխությունը կարող է հանել  
մարդկությունն իմպերիալիզմի յեւ իմպե-


րիալիստական պատերազմների ստեղծած անել կացութունից: Ինչ դժվարութունների յեւ հանդիպի հեղափոխութունը, ինչքան հնարավոր լինեն նրա ժամանակավոր անհաջողութունները կամ հակահեղոփոխական հարվածները—պրոլետարիատի վերջնական հաղթութունն անխուսափելի յեւ:

Համաշխարհային պրոլետարական հեղափոխության այդ հաջողութունը պահանջում եւ առաջավոր յերկրների բանվոր դասակարգի լիակատար համերաշխութունը, ամենասերտ յեղբայրական միութունը, հեղափոխական գործունեյության ըստ կարելոյն ամուր միասնականութունը:

Այդ պայմաններն անիրագործելի չեն, յեթե սկզբունքորեն յեւ վճռականապես չխզվեն կապերը յեւ անխնա պայքար չմղվի սոցիալիզմի այն բուրժուական ընդաթյուրման հետ, վոր հաղթանակել եւ պաշտոնական սոցիալ-դեմոկրատական յեւ սոցիալիստական կուսակցութունների վերին շերտերում:

Այսպիսի խեղաթյուրում եւ մի կողմից ոպպորտյունիզմի յեւ սոցիալ-շովինիզմի հոսանքը—խոսքով՝ սոցիալիստական, գործով՝ շովինիստական հոսանք, սեփական ազգային բուրժուազիայի թալանչիական շահերի պաշտպանության բողարկումը հայրենիքի պաշտպանության կեղծ լոզունգով, ինչպես առհասարակ, նույնպես յեւ հատկապես 1914—1918 թ.թ. իմպերիալիստական պատերազմի ժամանակ: Այս հոսանքըն ստեղծվել եւ շնորհիվ նրա, վոր առաջավոր կապիտալիստական պետութունները կողոպտելով գաղութային յեւ թույլ ժողովուրդներին՝ հնարավորութուն են տալիս բուրժուազիային այդ կողոպուտից ստացվող գերշահի հաշվին արտոնյալ վիճակի մեջ դնելու յեւ դրանով կաշառելու պրոլետարիատի վերին շերտերին, խաղաղ ժամանակներում ազատովից նրանց տանելի բաղբենիական գոյութունը յեւ իր մտածառայության վերջնելու այդ շերտերի դեկավարներին: Ոպպորտյունիստներն ու սո-

1918



ցիալ-շովինիստները սպասավորելով բուր-  
ժուազիային՝ պրոլետարիատի դասակար-  
գային ուղղակի հակառակորդներն են,  
մանավանդ այժմ, յերբ նրանք կապիտա-  
լիստների հետ միացած, զինված ձեռքով  
ձնշում են պրոլետարիատի հեղափոխական  
շարժումը ինչպես իրենց, նույնպես յեվ  
ոտար յերկրներում:

Մյուս կողմից սոցիալիզմի բուրժուա-  
կան խեղաթյուրումներն և «կենտրոնի»  
հոսանքը, վոր հավասարապես յերևման և  
զալիս բոլոր կապիտալիստական յերկրնե-  
րում. սա տատանվում և սոցիալ-շովինի-  
ստների յեվ կոմմունիստների միջև,  
միություն պահպանելով առաջինների հետ  
յեվ փորձ անելով վերականգնել սնանկա-  
ցած 2-րդ Ինտերնացիոնալը: Պրոլետարիա-  
տի ղեկավարը նրա ազատության համար  
մղվող պայքարում նոր 3-րդ կոմմունիս-  
տական Ինտերնացիոնալն և, վորի գնդե-  
րից մեկն և Համ. Կ. Կ. ք: Սյս Ինտերնա-  
ցիոնալը փաստորեն ստեղծվել և մի շարք

յերկրների, մանավանդ Գերմանիայի նախ-  
կին սոցիալիստական կուսակցություննե-  
րի իսկապես պրոլետարական տարրերից  
կազմված կոմմունիստական կուսակցու-  
թյուններից, իսկ ձեվականորեն հիմնվել և  
իր առաջին համագումարում՝ 1919 թ.  
մարտին, Մոսկվայում: Կոմմունիստական  
Ինտերնացիոնալը, վոր բոլոր յերկրներում  
պրոլետարական մասսաների մեջ ավելի  
ու ավելի համակրանք և գտնում, վոչ  
միայն իր անվամբ և վերադառնում դե-  
պի մարքսիզմը, այլ յեվ իր ամբողջ գա-  
ղափարական-քաղաքական բովանդակու-  
թյամբ, իր բոլոր գործողություններով ի-  
րազործում և Մարքսի հեղափոխական  
ուսմունքը՝ գտած բուրժուական-ոպպոր-  
տյունիստական խեղաթյուրումներից:

Ավելի կոնկրետ կերպով զարգացնե-  
լով պրոլետարական դիկտատուրայի նը-  
պատակները Ռուսաստանի վերաբերմամբ,  
վորի զլխավոր հատկանիշը բնակչության  
մանր-բուրժուական շերտերի թվական գե-

րազանցությունն ե, Համ. Կ. Կ-ը հետե-  
վյալ կերպով ե վորոշում այդ նպատակ-  
ները.

**ԸՆԴ ԱՆՈՒՐ ՔՕՂՍ ՔՕԱԿՍՆ ԲՆՍ.ԳՍ.  
ՎՍՈՌԻՄ.**

1) Բուրժուական հանրապետությու-  
նը, անգամ ամենից դեմոկրատականը, վոր  
սրբագործվում ե համաժողովրդական, հա-  
մազգային կամ ապադասակարգային կամ-  
բի լոզունգներով. գործնականում անխու-  
սափելիորեն բուրժուազիայի դիկտատու-  
րա յե ներկայացնում, աշխատավորների  
ահագին մեծամասնությունը մի բուռն  
կապիտալիստների կողմից շահագործող  
յեվ ճնշող մի մեքենա յե՝ շնորհիվ հողի  
յեվ արտադրության այլ միջոցների մաս-  
նավոր սեփականության: Իրան հակառակ,  
պրոլետարական կամ խորհրդային դեմո-  
կրատիան ամբողջ պետական ապպարատի,  
տեղային յեվ կենտրոնական, վարից-վեր,

մշտական յեվ միակ հիմքը դարձրեց հենց  
կապիտալիզմից ճնշված դասակարգերի,  
պրոլետարների յեվ ամենաչքավոր գյուղա-  
ցիների - կիսապրոլետարների, այսինքն  
բնակչության ահագին մեծամասնության  
մասսայական կազմակերպությունները:

Հենց դրանով խորհրդային պետու-  
թյունն իրագործեց, ի դեպ անհամեմատ  
ավելի լայն չափով, քան վորեվե այլ  
տեղ, տեղական յեվ շրջանային ինքնավա-  
րությունը, առանց վերից նշանակված վորե-  
վե իշխանության: Կուսակցության նպատա-  
կըն ե անդուլ աշխատանքով իսկապես յեվ  
լիովին կենսագործել դեմոկրատիզմի այդ  
գերագույն տիպարը, վորն իր կանոնավոր  
գործառության համար մասսաների կուլ-  
տուրականության, կազմակերպվածության  
յեվ ինքնագործունեյության մակերելութի  
մշտական բարձրացում ե պահանջում:

2) Հակառակ բուրժուական դեմո-  
կրատիային, վոր թագցնում ե իր պետու-  
թյան դասակարգային բնույթը, խորհրդա-

յին իշխանութիւնը բացորոշ ընդունում ե  
ամեն մի պետութեան անխուսափելի դա-  
սակարգային բնույթը, քանի չի չքացել  
բոլորովին հասարակութեան դասակարգա-  
յին բաժանումը յեւ զրա հետ միասին՝  
ամեն մի պետական իշխանութիւն: Խոր-  
հրդային պետութիւնը, իր իսկ ելութեամբ,  
նպատակ ունի ճնշել շահագործողների  
դիմադրութիւնը, յեւ Խորհրդային Սահ-  
մանադրութիւնը չի վարանում զրկել շա-  
հագործողներին քաղաքական իրավունքնե-  
րից՝ հիմք ընդունելով, վոր ամեն մի ազա-  
տութիւն խաբեքայութիւն ե, յեթե հա-  
կատում ե աշխատանքի ազատագրմանը  
կապիտալի ճնշումից: Անշեղ գլուխ բերե-  
լով շահագործողների դիմադրութեան ճըն-  
շումը յեւ զաղափարականորեն պայքա-  
րելով բուրժուական իրավունքների ու ա-  
զատութիւնների բացարձակ բնույթի վե-  
րաբերմամբ խորապես արմատացած նա-  
խապաշարմունքների դեմ՝ պրոլետարիատի  
կուսակցութիւնը միաժամանակ իրեն նը-

պատակ ե դնում պարզաբանել, վոր քա-  
ղաքական իրավունքներից զրկելն ու ազա-  
տութեան յուրաքանչյուր սահմանափա-  
կում անհրաժեշտ են միայն վորպես պայ-  
քարի ժամանակավոր միջոց՝ իրենց արտո-  
նութիւնները պաշտպանելու կամ վերա-  
կանգնելու դիտումով շահագործողների  
ձեռնարկած փորձերի դեմ: Այնքան, վոր-  
քան կվերանա մարդը մարդու միջոցով  
շահագործելու առարկայական հնարավո-  
րութիւնը, կվերանա նայեւ այդ ժամա-  
նակավոր միջոցի անհրաժեշտութիւնը, յեւ  
կուսակցութիւնը կձգտի սահմանափակել  
կամ լիովին վերացնել այդ:

3) Բուրժուական դեմոկրատիան սահ-  
մանափակվում եր ձեւականորեն տարա-  
ծելով բոլոր քաղաքացիների վրա քաղա-  
քական իրավունքները յեւ ազատութիւն-  
ները, ինչպիսիք են ժողովների, միութիւն-  
ների, մամուլի իրավունքները:

Բայց իրոք բուրժուական դեմո-  
կրատիայի ժամանակ ինչպես վարչական

պրակտիկան, այնպես ել գլխավորապես աշխատավորների տնտեսական ստրկութիւնը շարունակ գրկում եյին վերջիններիս այդ ազատութիւններն ու իրավունքները թիչ թե շատ լայնորեն ոգտագործելու հնարավորութիւնից:

Ընդհակառակը, պրոլետարական դեմոկրատիան իրավունքների յեվ ազատութիւնների ձեւական հուշակման տեղը դնում ե հրանց փաստական ապահովումն ամենից առաջ յեվ ամենից շատ բնակչութեան հենց այն դասակարգերին, վոր ճնշվում եյին կապիտալիզմից, այսինքն՝ պրոլետարիատին յեվ գյուղացիութեանը: Դրա համար խորհրդային իշխանութիւնը խլում ե բուրժուազիայից շինութիւններ, տպարաններ, թղթի պահեստներ յեվ այլն՝ դրնելով դրանք աշխատավորների ու նրանց կազմակերպութիւնների լիակատար տրամադրութեան տակ:

Համ. Կ. Կ. նպատակն ե՝ աշխատավոր բնակչութեան միշտ ավելի լայն

մասսաներ գրավել դեմոկրատական իրավունքներից յեվ ազատութիւններից ոգտրվելու համար յեվ ընդլայնել սրա նյութական հնարավորութիւնը:

4) Բուրժուական դեմոկրատիան դրերի ընթացքում հայտարարել ե մարդկանց իրավահավասարութիւն՝ անկախ սեռից, կրօնից, ռասայից յեվ ազգութիւնից, բայց կապիտալիզմը վոչ մի տեղ թույլ չի տվել փաստորեն իրագործելու այդ իրավահավասարութիւնը, իսկ իմպերիալիստական աստիճանի վրա ռասայական յեվ ազգային ճնշումը սրել ե ամենաուժեղ չափով: Միայն շնորհիվ նրա, վոր խորհրդային իշխանութիւնն աշխատավորների իշխանութիւնն ե՝ նա կարողացավ մինչև վերջը յեվ կյանքի բոլոր ասպարեզներում, առաջին անգամ աշխարհում, գլուխ բերել այդ իրավահավասարութիւնը, մինչ կանանց անհավասարութեան վերջին հետքերի վոչնչացումն ամուսնական յեվ առհասարակ բնտանեկան իրավունքի շրջանում:

Ներկա մոմենտին կուսակցության նպատակն և գերազանցորեն զաղափարական յեվ դաստիարակչական աշխատանք տանել՝ նախկին անհավասարության ու կանխակալ համոզմունքների բոլոր հետքերը միանգամայն վոչնչացնելու, մանավանդ պրոլետարիատի յեվ գյուղացիության հետամնաց շերտերի մեջ:

Զսահմանափակվելով կանանց ձեռնարկյալ իրավահավասարությամբ՝ կուսակցությունը ձգտում է նրանց ազատագրել հնացած տնային տնտեսության նյութական ծանրությունից՝ փոխարինելով այն կոմմունիստական հիմունքներով կազմակերպված տներով, հասարակական ճաշարաններով, կենտրոնական լվացարաններով, մսուրներով յեվ այլն:

5) Բուրժուական դեմոկրատիայից յեվ պարլամենտարիզմից անհամեմատ ավելի շատ հնարավորություն ընծեռելով աշխատավորական մասսաներին՝ պատգամավորների ընտրություն կայացնելու

յեվ նրանց յետ կանչելու ամենահեշտ յեվ բանավորներին ու գյուղացիներին մատչելի յեղանակով՝ խորհրդային իշխանությունը միանգամայն վոչնչացնում է պարլամենտարիզմի բացասական կողմերը, մանավանդ որենադիր յեվ գործադիր իշխանությունների անջատումն իրարից, ներկայացուցչական ժողովների կտրվածությունը մասսաներից յեվ այլն:

Խորհրդային պետությունը մոտեցնում է պետական ապարատը մասսաներին նայել նրանով, վոր ընտրական միավորը յեվ պետության հիմնական քիչը վոչ թե տերրիտորիալ շրջանն է համարվում, այլ արտադրական միավորը (գործարան, ֆաբրիկա): Կուսակցության նպատակն այն է, վոր ամբողջ աշխատանքն այդ ուղղությամբ առաջ տանելով՝ իրագործվի իշխանության որգանների յեվ աշխատավոր մասսաների ավելի սերտ մերձեցումը՝ այդ մասսաների միջոցով դեմոկրատիզմի ավելի յեվս լրիվ իրագործման հողի վրա յեվ

առանձնապես պաշտոնատար անձանց պատասխանատուության յեվ հաշվետուության լինութարկելու հանապարհով:

6) Մինչդեռ բուրժուական դեմոկրատիան, չնայած իր դեկլարացիաներին, զորքն ունեւոր դասակարգերի գործիք և դարձնում, անջատելով այն աշխատավոր մասսաներից յեվ հակադրելով այն դրանց, բաղաբական իրավունքներն իրագործելու հնարավորությունը գինւորների համար վոչնչացնելով կամ դժվարացնելով, խորհրդային պետությունը ձուլում և իր որդաններում, խորհուրդներում, բանվորներին ու գինւորներին՝ նրանց լիակատար իրավահավասարության յեվ շահերի միության հիմունքներով: Կուսակցության նպատակն և պաշտպանել ու զարգացնել բանվորների յեվ գինւորների այդ միությունը խորհուրդներում, ամրացնելով գինւած ուժի յեվ պրոլետարիատի ու կիսապրոլետարիատի կազմակերպությունների անբակտեւի կապը:

7) Ամբողջ հեղափոխության մեջ քաղաքային արդյունաբերական պրոլետարիատի՝ վորպես աշխատավոր մասսաների ամենից շատ համակենտրոնացած, միացած, լուսավորված յեվ պայքարում կոխված մասի՝ ղեկավար դերն արտահայտվել և ինչպես հենց խորհուրդների առաջացման գործում, նույնպես յեվ դրանց իշխանության որդաններ դառնալու ամբողջ ընթացքում: Մեր խորհրդային Սահմանադրությունն արտահայտել և այդ՝ արդյունաբերական պրոլետարիատին մի շարք արտոնություններ տալով՝ համեմատած գյուղի ավելի ցրիվ մանր-բուրժուական մասսաների հետ:

Համ. Կ. Կ. պարզաբանելով գյուղի սոցիալական կազմակերպման դժվարությունների հետ պատմականորեն կապված այդ արտոնությունների ժամանակավոր բնույթը, պետք և ձգտի անշեղ ու սխտեմատիկորեն ռգտագործելու արդյունաբերական պրոլետարիատի այդ դրություն-

նրն այն նպատակով, վորպեսզի հակառակ նեղ-համբարական յեւ Նեղ-արհեստակցական այն շահերին, վոր կապիտալիզմն եր աճեցնում բանվորների մեջ, առաջավոր բանվորների հետ ավելի սերտ շաղկապի գյուղական պրոլետարների ու կիսապրոլետարների, այլեւ միջին գյուղացիութեան ամենից հետամնաց ու ցրիվ մասսաներին:

8) Միայն պետութեան խորհրդային կազմակերպութեան շնորհիվ եւ, վոր պրոլետարիատի հեղափոխութեանը կարող եր միանգամից փշրել յեւ հիմնիվեր կործանել պետութեան հին, բուրժուական, չինովնիկական յեւ դատավորական ապարատը: Սակայն իայն մասսաների փոքրավականաչափ բարձր կուլտուրական մակերևութւոյթը, մասսաների կողմից պատասխանատու դիրքեր ուղարկված գործիչների անհրաժեշտ վարչական փորձառութեան բացակայութեանը, հին դպրոցի մասնագետների ծանր պայմաններում արագութեամբ գործի հրավիրելու անհրաժեշտու-

թեւանն ու քաղաքային բանվորների ամենից զարգացած շերտի զբաղվածութեանը զինվորական գործերով խորհրդային կազմի ներսում բյուրոկրատիզմի մասնակի վերածնունդ են առաջացրել:

Ամենավեճական պայքար մղելով բյուրոկրատիզմի դեմ՝ Համ. Կ. Կ. այդ ջարհիբի լիակատար հաղթահարման համար դիմում ե հետեւյալ միջոցներին.

1) Պարտադիր կերպով առաջ քաշել խորհրդի յուրաքանչյուր անդամին՝ պետութեան վարչութեան վորոշ աշխատանք կատարելու համար.

2) Հաջորդաբար փոխել այդ աշխատանքներն, այնպես, վոր խորհրդի անդամներն աստիճանաբար ընդգրկեն վարչութեան բոլոր ճյուղերը.

3) Աստիճանաբար առաջ քաշել ամբողջ աշխատավոր բնակչութեանը գլխովին պետութեան վարչական աշխատանքին մասնակցելու մասին.

Բոլոր այս միջոցների լիակատար յեւ

բազմակողմանի զործադրությունը հաջորդ բայլը լինելով այն ճանապարհի, վորի վրա կանգնած եր Պարիզի Կոմմունան, յեւ վարչության ֆունկցիաների պարզացումը աշխատավորների կուլտուրական մակերեւոյթի բարձրացման հետ միասին, — տալում են դեպի պետական իշխանության վոչնչացումը:

**Ա.ԶԳ.Ա.ՅԻՆ Լ.Ս.ՐՍ.ԱԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԲՆԱԳ.Ա.Վ.Ս.ՌՈՒՄ.**

9) Ազգային հարցում Համ. Կ. Կ. ղեկավարվում ե հետեւյալ առաջադրություններով.

ա) Յելակետ ե ընդունվում տարբեր ազգությունների պրոլետարների յեւ կիսապրոլետարների մերձեցման բաղաբականությունը՝ կալվածատերերի յեւ բուրժուազիայի տապալման նպատակով միատեղ հեղափոխական աշխատանք կատարելու համար:

բ) Ճնշված յերկրների աշխատավոր մասսաների անվստահությունը դեպի այդ յերկրները ճնշած պետությունների պրոլետարիատը հաղթահարելու նպատակով՝ անհրաժեշտ ե վոչնչացնել ամեն մի ազգային խմբակցության բոլոր յեւ յուրաքանչյուր տեսակի արտոնությունները, ճանաչել ազգությունների լիակատար իրավահավասարությունը, ընդունել պետական անջատման իրավունքը զաղութների յեւ անիրավահավասար ազգությունների համար:

գ) Նույն նպատակով, վորպես դեպի լիակատար միություն տանող անցողական մի ձեւ, կուսակցությունը ձգտում ե խորհրդային տիպարով կազմակերպված պետությունների ֆեդերատիվ միացման:

դ) Այն հարցում, թե ո՞վքեր են ազգային անջատման կամքի կրողները, Համ. Կ. Կ. կանգնած ե պատմական դասակարգային տեսակետի վրա, հաշվի առնելով, թե իր պատմական զարգացման վոր աստիճանի վրա յե կանգնած տվյալ ազգու-

Թյունը՝ միջնադարից դեպի բուրժուական դեմոկրատիա, թե՞ բուրժուական դեմոկրատիայից դեպի խորհրդային կամ պրոլետարական դեմոկրատիա տանող ճանապարհի վրա:

Համենայն դեպս այն ազգությունների պրոլետարիատի կողմից, վոր ենշող ազգություններ են յեղել, պետք է առանձին զգուշություն յեվ առանձին ուշադրություն գործ դրվի ենշված անիրավահավասար ազգությունների աշխատավոր մասսաների հնավանդ ազգային զգացմունքների վերաբերմամբ: Միայն այդպիսի քաղաքականությամբ է հնարավոր պայմաններ ստեղծել միջազգային պրոլետարիատի իրոք ամուր, հոժարակամ միության համար, ինչպես այդ ցույց տվեց մի շարք ազգային խորհրդային հանրապետությունների խորհրդային Ռուսաստանի շուրջը միանալու փորձը:

#### Ռ.Ս.ՋՄՁ.Կ.Ս.Ն ԲՆՍ.ԳՍ.ՎՍ.ՌՈՒՄ.

10) Ռազմական ընագավառում կուսակցության նպատակները սահմանվում

են հետեւյալ հիմնական առաջադրություններով.

ա) Իմպերիալիզմի կազմալուծման յեվ ահող քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում հնարավոր չե վոչ հին բանակը պահպանել, վոչ նորը կազմակերպել այսպես կոչված ապադասակարգային կամ համազգային հիմքերի վրա: Կարմիր բանակը վորպես պրոլետարական դիկտատուրայի գործիք՝ անհրաժեշտորեն պետք է ունենա բացարձակ դասակարգային բնույթ, այսինքն՝ կազմվի բացառապես պրոլետարիատից յեվ սրան մոտիկ՝ գյուղացիության կիսապրոլետարական շերտերից: Միայն դասակարգերի վոչնչացումի ընթացքում է, վոր նմանորինակ դասակարգային բանակը համաժողովրդական սոցիալիստական միլիցիա կդառնա:

բ) Անհրաժեշտ է բոլոր պրոլետարներին ու կիսապրոլետարներին ամենալայն չափով սովորեցնել ռազմական գործը յեվ համապատասխան առարկաների դասա-

թյունը՝ միջնադարից դեպի բուրժուական դեմոկրատիա, թե՛ բուրժուական դեմոկրատիայից դեպի խորհրդային կամ պրոլետարական դեմոկրատիա տանող ճանապարհի վրա:

Համենայն դեպս այն ազգությունների պրոլետարիատի կողմից, վոր ճնշող ազգություններ են յեղել, պետք է առանձին ազգաբնակչության յեւ առանձին ուշադրություն գործ դրվի ճնշված անիրավահավասար ազգությունների աշխատավոր մասսաների հնավանդ ազգային զգացմունքների վերաբերմամբ: Միայն այդպիսի քաղաքականությամբ և հնարավոր պայմաններ ստեղծել միջազգային պրոլետարիատի իրոք ամուր, հոժարակամ միության համար, ինչպես այդ ցույց տվեց մի շարք ազգային խորհրդային հանրապետությունների և որհրդային Ռուսաստանի շուրջը միանալու փորձը:

#### ՌԱԶՄԵՆԵՆ ԲՆՍԳՍՎՍՌՈՒՄ:

10) Ռազմական բնագավառում կուսակցության նպատակները սահմանվում

են հետեւյալ հիմնական առաջադրություններով.

ա) Իմպերիալիզմի կազմալուծման յեւ ահող քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում հնարավոր չե վոչ հին բանակը պահպանել, վոչ նորը կազմակերպել այսպես կոչված ապադասակարգային կամ համազգային հիմքերի վրա: Կարմիր բանակը վորպես պրոլետարական ղիկտատուրայի գործիք՝ անհրաժեշտորեն պետք է ունենա բացարձակ դասակարգային բնույթ, այսինքն՝ կազմվի բացառապես պրոլետարիատից յեւ սրան մոտիկ՝ գյուղացիության կիսապրոլետարական շերտերից: Միայն դասակարգերի վոչնչացումի ընթացքում և, վոր նմանորինակ դասակարգային բանակը համաժողովրդական սոցիալիստական միլիցիա կդառնա:

բ) Անհրաժեշտ է բոլոր պրոլետարներին ու կիսապրոլետարներին ամենալայն չափով սովորեցնել ռազմական գործը յեւ համապատասխան առարկաների դասա-

վանդություն մտցնել դպրոցում:

գ) Կարմիր բանակի ռազմական ուսուցման ու դաստիարակման գործը պետք է կատարվի դասակարգային համախմբման յեվ սոցիալիստական լուսավորության հիմունքով: Ուստի անհրաժեշտ են բարեհոյս յեվ անձնվեր կոմմունիստներից բաղաբաղական կոմիսսարներ ռազմական պետերին կից, յեվ կոմմունիստական բջիջների կազմակերպություն յուրաքանչյուր զորամասում՝ ներքին գաղափարական կապ յեվ գիտակից դիսցիպլինա հաստատելու համար:

դ) Հին բանակի կազմակերպությանը հակադիր, անհրաժեշտ է՝ ըստ կարելույն կարճ ժամանակամիջոց զուտ զորանոցային ուսուցման համար, զորանոցների մերձեցում ռազմական յեվ ռազմա-բաղաբաղական դպրոցների տիպարին, ըստ կարելույն սերտ կապ զինվորական կազմակերպությունների յեվ ֆաբրիկաների, գործարանների, արհեստակցական միությունների, չքավոր գյուղացիների կազմակերպությունների միջեվ:

ե) Մատաղ հեղափոխական բանակի մեջ կարող է անհրաժեշտ կազմակերպական կապ յեվ կայունություն ստեղծվել գիտակից բանվորների յեվ գյուղացիների միջից յելած, առաջին նվազ թեկուզ ստորին, հրամանատարական կազմի միջոցով միայն: Ավելի ընդունակ ու յեռանդուն յեվ սոցիալիզմի գործին նվիրված զինվորներին հրամանատարական պաշտոնների համար պատրաստելը, այդ պատճառով, բանակի ստեղծման գործում ամենակարեւոր լինողիքներից մեկն է:

զ) Անհրաժեշտ է ամենալայն կերպով ոգտագործել նայեվ վերջին համաշխարհային պատերազմի ուլերատիվ յեվ տելսնիկական փորձը: Այս նպատակով անհրաժեշտ է բանակի կազմակերպության յեվ նրա ուլերատիվ ղեկավարության համար յայն չափերով գործի դնել հին բանակի դպրոցն ունեցած զինվորական մասնագետներին: Իր հերթին, այսպիսի գործակցության անհրաժեշտ պայմանն է բանակի

քաղաքական ղեկավարութեան յեզ հրամանատարական կազմի լիակատար վերահրակողութեան կենտրոնացումը բանվոր դասակարգի ձեռքում:

է) Հրամանատարական կազմի ընտրականութեան պահանջը, վոր անազին սկզբունքային նշանակութիւն ունեւ բուրժուական բանակի վերաբերմամբ, վորտեղ հրամանատարական կազմը ջոկվում յեզ դաստիարկվում եր վորպես զինվորների յեզ զինվորների միջոցով աշխատավոր մասսաների դասակարգային հպատակեցման ապպարատ, միանգամայն կորցնում ե իր սկզբունքային նշանակութիւնը դասակարգային բանվորական յեզ գյուղացիական կարմիր բանակի վերաբերմամբ: Ընտրականութեան յեզ նշանակովիութեան հնարավոր կապակցումը (комбинация) հեղափոխական դասակարգային բանակին թելադրվում յեզ կախված ե զորակազմութեան մակերիվոյթից, զորամասերի կապակցութեան աստիճանից, հրամանատարական կադրերի կազմից յեզ այլն:

### ԴՕՏՕՍՏՕՆՕԿՕՆ ԲՆԱԳՕՎՕՌՈՒՄ:

11) Իր ձեռքն առնելով ամբողջ իշխանութիւնը յեզ առանց մնացորդի վերացնելով բուրժուական տիրապետութեան որգանները—նախկին կառուցվածքի դատարանները՝ պրոլետարական դեմոկրատիան բուրժուական դեմոկրատիայի «դատավորների ընտրականութիւնը ժողովրդի միջոցով» բանածեզի փոխարեն առաջ երաշել «դատավորների ընտրականութիւնն աշխատավորներից յեզ միայն աշխատավորների միջոցով» դասակարգային լոզունգը և այն կիրառել դատարանի կազմակերպութեան մեջ, միաժամանակ հավատարեցնելով յերկու սեուերի ջոյոր իրավունքները, ինչպես դատավորների ընտրութեան, նույնպես յեզ դատավորների պարտականութիւնները կատարելու նկատմամբ:

Պրոլետարիատի յեզ չքավոր գյուղացիութեան ամենայն մասսաներին արդյունաբերութեան գործին մասնակից անե-

լու համար՝ դատարանի մեջ մտցված յեվ մշտապես փոխարինվող ժամանակավոր դատավոր-ատենակալների մասնակցութունը՝ վերապահելով դրանց ցուցակագրութունը մասսայական բանվորական կազմակերպութուններին, արհեստակցական միութուններին յեվ այլն:

Նախկին տարբեր կառուցվածքի յեվ բազմաթիվ ինստանցիաներ ունեցող դատարանների անվերջ շարանի փոխարեն միասնական ժողովրդական դատարան ըստեղծելով՝ խորհրդային իշխանութունը պարզ ձեվ ե տվել դատարանների կառուցվածքին՝ նրան բացառապես մատչելի դարձրնելով բնակչությանը յեվ վերացնելով գործավարության ամեն տեսակի բաշքշումները:

Վերացնելով տապալված կառավարութունների որենքները, խորհրդային իշխանութունը հանձնարարել ե խորհուրդների ընտրած դատավորներին իրագործել պրոլետարիատի կամբը, գործադրելով նրա

դեկրետները, իսկ այդպիսիների բացակայության կամ թերի լինելու դեպքում՝ դեկավարվել սոցիալիստական իրավագիտակցությամբ:

Պատժի բնագավառում այսպես կազմակերպված դատարաններն արդեն իսկ արմատապես փոխել են պատժի բնույթը՝ լայն չափերով իրագործելով պայմանական դատապարտութուն, հասարակական պարսավանքը կիրառելով վորպես պատժի միջոց, վերածելով բանտարկութունը պարտադիր աշխատանքի՝ ազատության վերապահումով, փոխարինելով բանտերը կրթական հաստատութուններով յեվ հնարավորութուն տալով գործադրելու ընկերական դատարանների պրակտիկան:

Համ. Կ. Կ. հետամուտ լինելով դատարանի ապագա զարգացմանն այդ իսկ ուղղությամբ, պետք ե ձգտի՝ դատավարական պարտականութունների կատարման համար գործի դնել ամբողջ աշխատավոր բնակչութունը գլխովին յեվ պատիժների

սիստեմը վերջնականապես փոխարինել դաստիարակչական բնույթ կրող միջոցների սիստեմով:

**ԺՈՂՈՎՐԻՑԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ԲՆԵԳԱՎԱՌՈՒՄ:**

12) Ժողովրդական լուսավորության բնագավառում Համ. Կ. Կ. իրեն նպատակ է դնում ավարտել 1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխության սկսած գործը՝ դրպրոցը բուրժուազիայի դասակարգային տիրապետության գործիքից դարձնել հասարակության դասակարգային բաժանումի լիակատար փոչնչացման գործիք՝ հասարակության կոմմունիստական վերածննդի գործիք:

Պրոլետարիատի ղեկատարության շրջամում, այսինքն կոմմունիզմի լիակատար իրագործումը հնարավոր դարձնող պայմանների նախապատրաստության շրջանում, դպրոցը փոչ միայն պետք է տարածի

կոմմունիզմի սկզբունքներն ընդհանրապես, այլև՛ տարածի պրոլետարիատի զաղափարական, կազմակերպչական, կրթական ազդեցությունն աշխատավոր մասսաների կիսապրոլետարական յեվ փոչ-պրոլետարական խավերի վրա՝ նպատակ ունենալով կոմմունիզմը վերջնականապես հաստատելու ընդունակ սերունդ դաստիարակել: Այդ տեսակետից ներկայիս մոտավոր նպատակն է՝ խորհրդային իշխանության արդեն հաստատած դպրոցական ու լուսավորական գործի հետեվյալ հիմքերի առաջիկա զարգացումը:

ա) Ջրի յեվ պարտադիր՝ ընդհանուր յեվ պոլիտեխնիկական (տեսականորեն յեվ գործնականորեն արտադրության բոլոր գլխավոր ճյուղերին ծանոթացնող) կրթություն յերկու սեռի բոլոր յերեխաների համար մինչեվ 17 տարեկանը:

բ) Նախադպրոցական հիմնարկությունների՝ մսուրների, պարտեզների, սպաստարանների յեվ այլն—ցանցիկազմակերպում

հասարակական դաստիարակութեան բարելավման յեվ կնոջ ազատագրման նպատակով:

գ) Միասնական աշխատանքի դպրոցի սկզբունքների լիակատար իրագործումն—դասավանդումը մայրենի լեզվով, յերկու սեռերի յերեխաների խառն ուսուցում, անպայման աշխարհիկ, այսինքն վորեվ կրոնական ազդեցութունից ազատ դպրոց, ուսուցման յեվ հասարակական-արտադրական աշխատանքի միջեվ սերտ կապ հաստատող, կոմմունիստական հասարակութեան համար բազմակողմանի զարգացում ունեցող անդամներ պատրաստող դպրոց:

դ) Բոլոր սովորողներին անողի, հագուստի, վոտնամանի, դասապիտույքների մատակարարում պետութեան հաշվով:

ե) Կոմմունիզմի գաղափարներով ներշնչված՝ լուսավորութեան աշխատավորների նոր կադրեր պատրաստելը:

զ) Աշխատավոր բնակչութեան գոր-

ծոն մասնակցութուն լուսավորութեան գործին («ժողովրդական կրթութեան խորհուրդներին» կազմակերպում, զրագետներին մոբիլիզացիա յեվ այլն):

է) Բանվորների յեվ գյուղացիների ինքնակրթութեան յեվ ինքնազարգացման գործին պետական բազմակողմանի ոժտնդակութուն (արտադպրոցական կրթական հաստատութունների ցանցի կազմակերպութուն—զրադարաններ, հասակավորների դպրոց, ժողովրդական տներ յեվ համալսարաններ, կուրսեր, կինեմատոգրաֆներ, ստուդիաներ, դասախոսութուններ յեվ այլն):

ը) Արհեստակցական կրթութեան գործի ընդլայնում 17 տարեկանից բարձր հասակ ունեցողների համար, ընդհանուր պոլիտեխնիկական գիտելիքների հետ միասին:

թ) Բարձրագույն դպրոցի լսարանների լայն մատչելիութուն բոլոր սովորել կամեցողներին յեվ առաջին հերթին բանվորների համար, բարձրագույն դպրոցում

դասավանդելու ասպարեզ տալ բոլոր նրանց, վորոնք կարող են այնտեղ ուսուցանել, թարմ գիտական ուժերի յեւ կաֆեդրայի միջեւ յեղած բոլոր յեւ յուրաքանչյուր տեսակի արգելքների վերացում. ուսանողների նյութական ապահովում՝ պրոլետարների յեւ գյուղացիներին բարձրագույն զբոսայգից ոգտվելու փաստական հնարավորութիւն տալու համար:

ժ) Հավասարապես անհրաժեշտ է աշխատավորի համար բանալ յեւ մատչելի դարձնել արվեստի բոլոր գանձերը, վոր ստեղծվել են նրանց աշխատանքի շահագործման հիմունքով ու մինչեւ այժմ շահագործողների բացառիկ տրամադրութիւն տակ են գտնվել:

ժա) Կոմմունիստական զաղափարների ամենալայն պրոպագանդայի կազմակերպութիւն յեւ այդ նպատակով պետական իշխանութիւն տալու արտադրող ու միջոցների ոգտագործում:

## ԿՐՈՆՍ.ԿՕՆ ԼՍՐՍ.ԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՍ.ԳՕ.Վ.Ս.ՌՈՒՄ.

13) Կրոնի վերաբերմամբ Համ. Կ. Կ. չի բավականանում արդեն իսկ որինականացված յեկեղեցին պետութիւնից յեւ դպրոցը յեկեղեցուց բաժանելու սկզբունքով. սկզբունք, վոր բուրժուական դեմոկրատիան մուծում է իր ծրագրների մեջ, սակայն աշխարհում վոչ մի տեղ չի գործադրում լիովին, շնորհիվ կապիտալի յեւ կրոնական պրոպագանդայի միջեւ յեղած բազմատեսակ փաստական կապերի:

Համ. Կ. Կ. ղեկավարվում է այն համոզումով, թե միայն մասսաների բովանդակ հասարակական-անտեսական գործունեութիւն պլանաչափութիւն ու զիտակցութիւն իրագործումն է, վոր կարող է լիովին մեռցնել կրոնական նախապաշարումները: Կուսակցութիւնը ձգտում է լիովին փշրել հարստահարող դասակարգերի յեւ կրոնական պրոպագանդայի կազ-

մակերպութեան միջեւ յեղած կապը՝ նպաստելով աշխատավոր մասսաների փաստական ազատագրմանը կրոնական նախապաշարմունքներից յեւ կազմակերպելով ամենալայն զիտական-լուսավորական յեւ հակակրոնական պրոպագանդա: Ընդ սմին անհրաժեշտ է հոգատարութեամբ խուսափել հավատացյալների զգացմունքների ամեն տեսակի վիրավորանքից, վորով միայն կրոնական մոլեռանդութունն է ամրացվում:

#### ՏՆՏԵՍՍԵՆ ԲՆՍԳՍՎԱՌՈՒՄ:

14) Անշեղ շարունակել յեւ ավարտել բուրժուազիայի սեփականազրկումը, վորն սկսած է յեւ իր գլխավոր յեւ հիմնական մասերում արդեն վերջացրած է. անշեղ շարունակել յեւ ավարտել արտադրութեան ու շրջանառութեան միջոցների փոխանցումը Խորհրդային Հանրապետութեան, այսինքն բոլոր աշխատավորների ընդհանուր սեփականութեան:

15) Գլխավոր յեւ հիմնական, խորհրդային իշխանութեան ամբողջ տնտեսական քաղաքականութիւնը վորոշող նպատակ համարել յերկրի արտադրողական ուժերի բարձրացումը բոլոր միջոցներով: Ինկատի ունենալով յերկրի ծանր փլուզումը՝ բնակչութեան անհրաժեշտ մթերքների քանակն ըստ ամենայնի շատացնելու գործնական նպատակին պետք է յենթարկված լինեն մնացած խնդիրները: Այդ բնագավառում ստացված գործնական հետեւյալներով պետք է չափվի ժողովրդական տնտեսութեան հետ կապված խորհրդային յուրաքանչյուր հիմնարկութեան աշխատանքի արդյունավետութիւնը: Ընդ սմին անհրաժեշտ է առաջին հերթին ուշադրութիւն դարձնել հետեւյալի վրա.

ա) Իմպերիալիստական տնտեսութեան կազմալուծումը խորհրդային շինարարութեան առաջին շրջանին ժառանգութիւն է թողել մի տեսակ քառս արտադրութեան կազմակերպութեան յեւ վարչու-

թյան մեջ: Վորպես հիմնական նպատակներից մեկը՝ ավելի յեզս համառորեն առաջ ե բաշվում յերկրի ամբողջ տնտեսական գործունեության մարսիմալ միացումը մի համապետական պլանով: արտադրության ամենամեծ կենտրոնացումը՝ արտադրության առանձին ճյուղերի ու նրանց խմբակցությունների միացման, այն լավագույն արտադրական միավորների մեջ կենտրոնացնելու, այլեւ տնտեսական նպատակների արագ իրագործման իմաստով: արտադրական ամբողջ ապպարատի լիակատար կարգավորումը, յերկրի բոլոր նյութական միջոցների նպատակահարմար յեւ խնայող ոգտագործումը:

Ընդ սմին անհրաժեշտ ե հոգ տանել ուրիշ ժողովուրդների հետ տնտեսական աշխատակցության յեւ բաղաբական կապերի ընդլայնման մասին՝ ձգտելով միաժամանակ միասնական տնտեսական պլան ստեղծել դրանցից այնպիսիների հետ, վորոնք արդեն խորհրդային կարգերի յեն անցել:

բ) Անհրաժեշտ ե լայնորեն ոգտագործել մանր յեւ տնայնագործական արդյունաբերությունը՝ տնայնագործներին պետական պատվերներ տալով, տնայնագործությունը յեւ մանր արդյունաբերությունը մուծել հում նյութի յեւ վառելանյութի մատակարարման ընդհանուր պլանի մեջ, այլեւ ֆինանսական ոգնություն մատակարարել դրանց, առանձին տնայնագործների տնայնագործական արտելների, արտադրական կոոպերատիվների յեւ մանր ձեռնարկությունների ավելի խոշոր արտադրական յեւ արդյունագործական միավորների մեջ միանալու պայմանով: նման միացումների խրախուսումն ընծեռելով նրանց տնտեսական արտոնություններ, վոր ուրիշ միջոցների հետ միասին նպատակ պիտի ունենան վերացնել տնայնագործների՝ մանր արդյունագործներ ղառնալու ձգտումը յեւ դյուրացնել այդ հետամնագ արտադրության փոխանցումն ավելի բարձր՝ խոշոր մեքենաշարժ արդյունաբարության:

գ) Հանրայնացրած արդյունաբերութեան կազմակերպչական ապարատն առաջին հերթին պետք է հենվի արհեստակցական միությունների վրա: Նրանք պետք է միշտ ավելի յեւ ավելի ազատագրվեն համարարային սահմանափակութիւններից ու դառնան խոշոր արտադրական միութիւններ, վոր ընդգրկում են արտադրութեան տվյալ ճյուղի աշխատավորների մեծամասնութիւնը, իսկ հետզհետե յեւ գլխովին բոլորին:

Խորհրդային Հանրապետութեան որենքների յեւ ընդունված պրակտիկայի համաձայն արդեն իսկ մասնակցութիւն ունենալով արդյունաբերութեան բոլոր տեղային յեւ կենտրոնական ղեկավար որդաններում հետազայում արհեստակցական միութիւնները պետք է փաստորեն իրենց ձեռքում կենտրոնացնեն բովանդակ ժողովրդական տնտեսութեան ամբողջութեան, վորպես մի տնտեսական ամբողջութեան, վարչութիւնը: Այդպիսով՝ ապահովելով

ժողովրդական տնտեսութեանը ղեկավարող կենտրոնական պետական վարչութեան յեւ աշխատավոր լայն մասսաների անբակտելի կապը՝ արհեստակցական միութիւնները պետք է ամենալայն չափով վերջիններիս տնտեսական շինարարութեան գործին անմիջապես մասնակից անեն: Արհեստակցական միութիւնների մասնակցութիւնը տնտեսավարութեան մեջ յեւ միաժամանակ նրանց միջոցով լայն մասսաների գործակցութիւնը՝ խորհրդային իշխանութեան կողմից տնտեսական ապարատի բյուրոկրատացման դեմ պայքարելու գրելխավոր միջոցն է յեւ հնարավորութիւն է տալիս իրոք ժողովրդական վերահսկողութիւն հաստատելու տնտեսութեան վիճակի վրա:

դ) Ժողովրդական տնտեսութեան պլանաչափ զարգացման նպատակի տեսակետից պետութեան մեջ յեղած ամբողջ բանվորական ուժի անհրաժեշտ մաքսիմալ ոգտագործումը, նրա ուղիղ բաշխումն ու

վերաբաշխումը ինչպես տարբեր տերրիտորիալ շրջանների, նույնպես յեւ վոգո-վրդական տնտեսութեան տարբեր նյութերի միջեւ, պետք է կազմի խորհրդային իշխանութեան տնտեսական քաղաքականութեան մոտավոր խնդիրը յեւ կարող է իրագործվել նրա միջոցով՝ միայն սերտ կապ պահպանելով արհեստակցական միութեաններին հետ: Ամբողջ աշխատունակ բնակչութեան գլխովին մտրիլիզացիան խորհրդային իշխանութեան կողմից, արհեստակցական միութեանների մասնակցութեամբ, վորոշ հասարակական աշխատանքներ կատարելու համար, պետք է ավելի լայն ու ավելի սիստեմորեն կիրառվի, քան այդ արվել է մինչեւ որս:

ե) Աշխատանքի կապիտալիստական կազմակերպութեան քայքայման պայմաններում յերկրի արտադրողական ուժերը կարող են վերականգնել ու զարգանալ, յեւ արտադրութեան սոցիալիստական յեղանակը կարող է ամրանալ միայն աշխատա-

վորների ընկերային դիսցիպլինի, նրանց մարսիմալ ինքնագործունեյութեան, պատասխանատւութեան զգացմունքի յեւ աշխատանքի արդյունավետութեան փոխադարձ ամենախիստ վերհսկողութեան հիմունքների վրա:

Այդ նպատակի իրագործումը համառ սիստեմատիկ աշխատանք է պահանջում մասսաների վերադաստիարակման գործում, վոր դյուրացված է այժմ հենց շնորհիվ նրա, վոր մասսաները գործնապես տեսնում են կապիտալիստի, կալվածատիրոջ յեւ վաճառականի հեռացվելը յեւ սեփական պրակտիկայի փորձով այն համոզման են գալիս, վոր իրենց բարեկեցութեան մակերեւոյթը բացառապես իրենց սեփական աշխատանքի դիսցիպլինից է կախված:

Նոր սոցիալիստական դիսցիպլինի ըստեղծման այս գործի մեջ գլխավոր դերն ընկնում է արհեստակցական միութեանների վրա: Վերջիններս, հրաժարվելով հին շարլոնից, այդ նպատակի իրագործման հա-

մար պետք է գործադրեն ու փորձեն տարբեր միջոցներ, ինչպես, որինակ՝ սահմանել հաշվետվութուն յեվ մշակման նորմեր, հատուկ ընկերական բանվորական դատարանների առաջ պատասխանատվության կանչել յեվ այլն:

գ) Արտադրական ուժերի զարգացման նույն նպատակը պահանջում է անհապաղ, լայնորեն յեվ բազմակողմանի ոգտագործել գիտության յեվ տեխնիկայի կապիտալիզմից մեզ ժառանգութուն թողած մասնագետներին, նայած նրան, վոր սրանք մեծ մասամբ անխուսափելիորեն տոգորված են բուրժուական աշխարհայեցողությամբ ու սովորութուններով: Կուսակցութունը վերջացած է համարում այս շերտի հետ սուր պայքարի շրջանը, վոր առաջ եր յեկել նրանց կազմակերպած սաբոտաժի շնորհիվ. այդ սաբոտաժն ընդհանրապես հաղթահարված է: Կուսակցութունը սերտ կապ պահպանելով արհեստակցական միութունների հետ, պետք է

առաջ տանի իր նախկին գիծը. մի կողմից ամենափոքր քաղաքական գիջումն իսկ չանել բուրժուական այդ խավին յեվ անխնայողաբար ենշել նրա հակահեղափոխական ամեն տեսակի վոտնձգութունները, իսկ մյուս կողմից նույնքան անխնայողաբար կռվել այն կեղծ-արմատական, բայց իրոք գուեհիկ մեծամտության դեմ, վոր իբր աշխատավորները կարող են հաղթահարել կապիտալիզմն ու բուրժուական կարգերը՝ առանց բուրժուական մասնագետներից սովորելու, առանց նրանց ոգտագործելու, առանց աշխատանքի յերկարատեվ դպրոց անցնելու նրանց հետ:

Զգտելով ամեն մի աշխատանքի վարձատրության հավասարեցման ու լիակատար կոմմունիզմի, խորհրդային իշխանութունը չի կարող անմիջական նպատակ համարել այդ հավասարեցման իրագործումը ներկա վայրկյանին, յերբ միայն կապիտալիզմից կոմմունիզմին անցնելու առաջին քայլերն են արվում: Ուստի մի վորոշ ժամանակ

պետք ե ղեռ պահել մասնագետների ավելի բարձր վարձատրությունը, փորպեսզի նրանք աշխատեն փոշ թե ավելի վատ, այլ ավելի լավ, քան առաջ: Նույն նպատակով չի կարելի նայել հրաժարվել պրեմիաների սիստեմից՝ ամենահաջող չեվ հատկապես կազմակերպչական աշխատանքի համար:

Նմանապես անհրաժեշտ ե ստեղծել բուրժուական մասնագետների համար ընկերային ընդհանուր աշխատանքի պայմաններ՝ ձեռք ձեռքի տված շարքային բանփորների մաստայի հետ, փորը գործում ե գիտակից կոմմունիստների ղեկավարությամբ, չեվ դրանով նպաստել կապիտալիզմի շնորհիվ իրարից բաժանված ֆիզիկական չեվ մտավոր աշխատավորների փոխադարձ հասկացողությանն ու մերձեցմանը:

է) Խորհրդային իշխանությունն արդեն մի շարք միջոցներ ե ձեռնարկել, փոր նպատակ ունեն գիտության զարգացումն

ու նրա մերձեցումն արտադրության պրոցեսին: Ստեղծվել ե մի ամբողջ ցանց նոր գիտական-գործնական ինստիտուտների, լաբորատորիաների, փորձակայանների, նոր տեխնիկական մեթոդների, կատարելագործումների չեվ գյուտերի ստուգման փորձնական ձեռնարկների, բոլոր գիտական ուժերի ու միջոցների հաշվառում ե կազմակերպվում չեվ այլն: Համ. Կ.Կ. պաշտպանելով բոլոր այդ միջոցները՝ ձգտում ե նրանց հետագա զարգացմանը չեվ յերկրի արտադրական ուժերի աճման հետ միպին՝ գիտական աշխատանքի համար ամենանպաստավոր պայմաններ ստեղծելուն:

#### ԳՅՈՒՂԱՏՆՑԵՍՍԵԿԱՆ ԲՆԱԳԱՍՎԱՌՈՒՄ.

16) Խորհրդային իշխանությունը գրելու բերելով հողի մասնավոր սեփականատիրության լիակատար վերացումը՝ անցել ե արդեն մի շարք միջոցների կենսագործման, փորոնց նպատակը խոշոր սոցիա-

լիստական հողագործության կազմակերպումն ե: Այդ միջոցներից ամենակարեւորներն են. 1) Խորհրդային տնտեսությունների, այսինքն՝ խոշոր սոցիալիստական տնտեսությունների կազմակերպությունը. 2) Աջակցություն հողի հասարակական մշակման համար առաջացած հասարակություններին յեւ ընկերություններին. 3) Պետական ցանքսի կազմակերպումը բոլոր չցանված հողերում, ո՛ւմ եւ նրանք պատկանեն. 4) Բոլոր ագրոնոմիական ուժերի պետական մոբիլիզացիա՝ գյուղատնտեսական կուլտուրայի բարձրացման համար յեռանդուն միջոցների ձեռնարկելու նպատակով. 5) Աջակցություն գյուղատնտեսական կոմմունաներին, վորոնք խոշոր հավաքական տնտեսություն վարող հողագործների միանգամայն հոժարակամ միություններ են.

Բոլոր այդ միջոցները գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության բացարձակ անհրաժեշտ բարձրացման

միակ ճանապարհնկատելով՝ Համ. Կ. Կ. ձրգտում ե ըստ կարելույն լիակատար կերպով կենսագործել այդ միջոցները, տարածել նրանց յերկրի ամենից յետ մնացած շրջաններում յեւ դիմում ե նույն նպատակով առաջիկայում արվելիք բայելին:

Համ. Կ. Կ. առանձնապես ձգտում ե 1) գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ զբաղված գյուղատնտեսական կոոպերացիայի բազմակողմանի պետական պաշտպանության, 2) հողի բարելավման (մելիորացիայի) սիստեմի լայն իրագործման, 3) վարձատու կայանների միջոցով չբավոր յեւ միջակ գյուղացիության ինվեստարի լայն ու պլանաչափ մատակարարման:

Հաշվի առնելով այն հանգամանքը, վոր մանր-գյուղացիական տնտեսությունը դեռ յերկար պիտի գոյություն ունենա, Համ. Կ. Կ. ձգտում ե իրագործել մի շարք միջոցներ, վորոնց նպատակն ե բարձրացնել գյուղացիական տնտեսության արտա-

դրողականութիւնը: Այդ միջոցներն են,  
 1) գյուղացիական հողդաւազործման կարգավորումը (հողերի ցրվածութիւն, հեռավորութիւն յեւլ ալն վերացումը), 2) գյուղացիներին ազնվացրած հացահատիկներ յեւլ արվեստական պարարտանյութեր մատակարարելը, 3) գյուղացիական անասունների տեսակի ազնվացումը, 4) ազրոնտմիական գիտելիքներ տարածելը, 5) գյուղացիներին ազրոնտմիական ոգնութիւն հասցրելը, 6) գյուղացիների ինվենտարի նորոգումն խորհրդային արհեստանոցներում, 7) վարձատու կենտրոնների, փորձակայանների, ցուցադաշտերի կազմակերպումն, 8) գյուղացիական հողերի մելիորացիան:

17) Ինկատի ունենալով, փոր քաղաքի յեւլ գյուղի հակադրութիւնը գյուղի տնտեսական յեւլ կուլտուրական հետամնացութիւն ամենախոր հիմքերից մեկն է, իսկ դա ներկայումս գոյութիւն ունեցող սուր ճգնաժամին, թե քաղաքը յեւլ թե գյուղն այլասերման յեւլ կործանման անմիջական

վտանգի առաջ եղնում՝ Համ. Կ Կ. այդ հակադրութիւն վոչնչացման մեջ է տեսնում կոմմունիստական շինարարութիւն հիմնական խնդիրներից մինը յեւլ, ընդհանուր միջոցներին կից, անհրաժեշտ է զտնում՝ արդունաբերական բանվորներին լայնորեն յեւլ պլանաչափ առաջ քաշել դեպի հողագործական կոմմունիստական շինարարութիւնը, նույն նպատակներով խորհրդային իշխանութիւն կողմից արդեն հիմնած համապետական «Բանվորական Աջակից Կոմիտեյի» գործունեութիւն զարգացումը յեւլ ալն:

18) Գյուղում վարելիք իր ամբողջ աշխատանքում Համ. Կ. Կ. առաջվա պես հենվում է նրա պրոլետարական յեւլ կիսապրոլետարական շերտերի վրա, կազմակերպում է դրանց նախ յեւլ առաջ վորպես ուրույն ուժ՝ ստեղծելով գյուղում կուսակցական բջիջներ, չքավոր գյուղացիների կազմակերպութիւններ, գյուղի պրոլետարների ու կիսապրոլետարների առանձին

տիպարի արհեստակցական միություններ, յեվ այլն՝ բոլոր միջոցներով մերձեցնելով նրանց քաղաքային պրոլետարիատին յեվ պոկելով նրանց գյուղական բուրժուազիայի ու մանր սեփականատիրական շահերի ազդեցությունից:

Կուլակների՝ գյուղական բուրժուազիայի վերաբերմամբ՝ Համ.Կ.Կ. քաղաքականությունն է—վեռական պայքար մղել նրանց հարստահարչական ձգտումների դեմ, ճնշել խորհրդային քաղաքականության նրանց ցույց տված դիմադրությունը:

Միջին գյուղացիության նկատմամբ Համ.Կ.Կ. քաղաքականությունն է՝ նրան աստիճանաբար յեվ պլանաչափ կերպով սոցիալիստական շինարարության մեջ մտցրնել: Կուսակցությունը ձգտում է անջատել նրան կուլակներից, քաշել բանվոր դասակարգի կողմը՝ ցույց տալով ուշադիր վերաբերմունք դեպի նրա կարիքները, պայքարելով նրա հետամնացության դեմ վոչ թե ճնշման միջոցներով, այլ գաղափարական

ներգործությամբ, ձգտելով ամեն պարագաներում, վորտեղ նրա կենսական շահերն են շոշափվում, գործնական համաձայնության գալ նրա հետ, զիջումներ անելով նրան կյանքի սոցիալիստական վերականգնման յեղանակների վորոշման մեջ:

#### ԲՅՇԵՄՔՆ ԲՆԱԳՅՎԱՌՈՒՄ.

19) Բաշխման բնագավառում ներկայումս խորհրդային իշխանության նպատակն է՝ անշեղ կերպով շարունակել առեւտրի փոխարինումը մթերքների պլանաչափ, համապետական մասշտաբով կազմակերպված քաշխումով: Նպատակ է դրվում ամբողջ բնակչությունն ընդգրկել սպառողական կոմունանների միասնական ցանցով, վոր ամենամեծ արագությամբ, պլանաչափությամբ, խնայողությամբ յեվ աշխատանքի նվազագույն սպառումով պետք է կարողանան բաշխել բոլոր անիրաժեշտ մթերքները՝ խստորեն կենտրոնացնելով բաշխման ամբողջ ապպարատը:

Սպառողական կոմմունաների յեւ իւրանց միությունների հիմքում պետք է դրված լինի գոյություն ունեցող համաքաղաքացիական յեւ բանվորական կոոպերացիան, վոր սպառողների մեծագույն կազմակերպությունն է յեւ կապիտալիզմի պատմության ընթացքում ամենից շատ նախապատրաստված՝ բաշխման մասսայական ապագարատն է:

Սկզբունքորեն միակ ուղիղը համարելով կոոպերատիվ ապագարատի հետագա կոմմունիստական զարգացումն այս ուղղությամբ յեւ վոչ թէ նրան մի կողմ նետելը՝ Համ. Կ. Կ. սիստեմորեն պետք է շարունակի իր քաղաքականությունը. նա պետք է պարտավորեցնի կուսակցության բոլոր անդամներին աշխատել կոոպերատիվներում, կոմմունիզմի վոգոմ պետք է ուղղություն տա սրանց, ոգտվելով նայել արհեստակցական միությունների աջակցությունից. պետք է զարգացնի կոոպերացիայի շուրջը կազմակերպված աշխատավոր բնակչության

ինքնագործունեյությունը յեւ կարգապահությունը, ջանք թափի, վորպեսզի ամբողջ բնակչությունը շրջապատվի կոոպերատիվների ցանցով, յեւ վորպեսզի այդ կոոպերատիվները ձուլվեն մի ընդհանուր՝ վոտից մինչեւ գլուխ ամբողջ Խորհրդային Հանրապետությունն ընդգրկող կոոպերատիվի մեջ. վերջապես, վոր ամենագլխավորն է, նա պետք է աշխատի ապահովել պրոլետարիատի ազդեցության գերակշռումն աշխատավորների մնացած շերտերի հանդեպ յեւ գործնական ճանապարհով փորձել ամենուրեք տարբեր միջոցներ, վոր հեշտացնում են յեւ իրագործում հին կապիտալիստական տիպարի մանր-բուրժուական կոոպերատիվների փոխանցումը պրոլետարիատի յեւ կիսապրոլետարիատի ղեկավարության ներքո գտնվող սպառողական կոմմունաներին:

**ՓՈՂԱՅԻՆ ՅԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԻ  
ԲՆՍ.ԳՍ.ՎՍ.ՈՒՄ.**

20) Խուսափելով Պարիզի Կոմմունայի գործած սխալներից՝ խորհրդային իշխանությունը Ռուսաստանում միանգամից գրավեց պետական բանկը, ապա անցավ մասնավոր առեվտրական բանկերի ազգայնացման, ձեռնարկեց ազգայնացրած բանկերի, խնայողական գանձարկղների յեվ պետական գանձատների միացմանը պետական բանկի հետ, այդպիսով նա ստեղծեց Խորհրդային Հանրապետության միասնական ժողովրդական բանկի կմախքը յեվ բանկը ֆինանսական կապիտալի տիրապետության տնտեսական կենտրոնից ու շահագործողների քաղաքական տիրապետության գործիքից բանվորական իշխանության գործիք ու տնտեսական հեղաշրջման լծակ դարձրեց։ Նպատակ դնելով խորհրդային իշխանության սկսած գործի հետեւողական ավարտումն առաջիկայում՝ Համ.Գ.Կ առա-

ծին հերթին առաջ ե քաշում հետեւյալ սկզբունքները.

ա) Ամբողջ բանկային գործի մոնոպոլիզացիան Խորհրդային պետության ձեռքում:

բ) Բանկային ու պերագիաների արմատական փոփոխումն ու պարզեցումը՝ բանկային ապարատը Խորհրդային Հանրապետության միակերպ հաշվառման յեվ մտահանուր հաշվապահության ապարատ դարձնելով: Պլանաչափ հասարակական տնտեսության կազմակերպման ընթացքում դա կլոնչացնի բանկը՝ վերածելով այն կոմմունիստական հասարակության հաշվապահության կենտրոնական մի մարմնի:

21) Կապիտալիզմից կոմմունիզմի փոխանցման շրջանում, բանի դեռ լիովին չի կազմակերպված մթերքների կոմմունիստական արտադրությունը յեվ բաշխումը, փողի փոչնչացումը հնարավոր չե: Այդ պայմաններում բնակչության բուրժուական տարրերը շարունակում են ոգտագործել

մասնավոր սեփականութիւն կազմող դրամանիշները՝ սպեկուլյացիայի, հարստացման յեւ աշխատավորներին կողոպտելու նպատակներով: Հենվելով բանկերի անգլայնացման վրա, Համ.Կ.Կ. ձգտում է կիրառել մի շարք միջոցներ, վոր ընդլայնում են անփող հաշվեհարդարն ու նախապատրաստում փողի փոխչացումը, փողի պարտադիր պահումը ժողովրդական շանկում, բյուջետային գրքույկների գործադրումը, փողի փոխարինումը չեկերով, մթերքներ ստանալու իրավունք տվող կարճատեւ տոմսերով յեւ այլն:

#### ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԵԳՍՎՈՒՈՒՄ.

22) Կապիտալիստներից խլած արտադրական միջոցների հանրայնացման դարաշրջանի առաջին մոմենտից սկսած պետական իշխանութիւնը դադարում է արտադրական պրոցեսին գերադաս՝ մակաբույծ ապարատ լինել. նա սկսում է վերած-

վել մի կազմակերպութեան, վոր անմիջապես իրագործում է յերկրի տնտեսութեան ղեկավարութիւնը, յեւ նույն չափով եւ պետական բյուջեն դառնում է ժողովրդական բովանդակ տնտեսութեան բյուջե:

Այս պայմաններում յեկամուտների յեւ ծախսերի հաշվեկշիռն իրագործելի յե միայն արդյունքների պլանաչափ պետական արտադրութեան յեւ բաշխման ուղիղ կազմակերպութեան պայմանով: Իսկ ինչ վերաբերում է անմիջական պետական ծախքերը ծածկելուն փոխանցման շրջանում, Համ.Կ.Կ. պետք է պաշտպանի սոցիալիստական հեղափոխութեան առաջին շրջանում կապիտալիստների վրա դրած պատմականորեն անհրաժեշտ յեւ որինավոր կոնտրիբուցիաների սիստեմի փոխարինումը պրոգրեսիվ յեկամտային յեւ զուլքային հարկով: Իսկ վորչափ այդ հարկը վերանում է ինքն իրեն, շնորհիվ ունեւոր դասակարգերի նրկատմամբ լայնորեն գործադրված եքսպրոպրիացիայի, պետական ծախքերը պետք է

ծածկել այլե՛վայլ պետական մենաշնորհներից ստացած յեկամուտների մի մասը պետական յեկամուտ դարձնելու միջոցով:

**ԲՆԱԿԱՐՑՆԱՅԻՆ ԼՍՐՅԻ ԲՆՍԳԱՎՍՈՒԻՄ.**

23) Զգտելով լուծել պատերազմի ընթացքում առանձնապես սրված բնակարանային հարցը՝ խորհրդային իշխանութիւնը լիովին խել է կապիտալիստական տնտեսներին պատկանող բոլոր տները յե՛վ հանձնել այն քաղաքային խորհուրդներին. քաղաքի ծայրամասերի բանվորներին մասսայաբար բուրժուական տներն և տեղափոխել. այդ տներից լավագույնները տվել և բանվորական կազմակերպութիւններին՝ պետութիւնն ւրա առնելով այդ շինութիւնների պահպանութիւնը. ձեռնարկել և բանվորական ընտանիքներին կահկարասիներով ապահովելուն յե՛վ այլն:

Ընթանալով վերոհիշյալ ուղիով յե՛վ

ընավ չըռափելով վոյ-կապիտալիստ տնտեսների շահերը՝ Համ. Կ.Կ. բոլոր ուժով ծրգտելու յն աշխատավոր մասսաների բնակարանային պայմանների բարելավման. հին քաղաքամասերի բնակչութիւն կուտակումի յե՛վ հակառողջապահական պայմանների վերացման, անպետք բնակարանների վոյրնչացման, հների վերաշինութիւն, բանվորական մասսաների գոյութիւնն նոր պայմաններին համապատասխան՝ նորերի շինութիւն, աշխատավորների նպատակահարմար տեղավորման:

**ՍՆԵՍԱՑՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՍՈՅԻՍԼԱԿԱՆ Ե.ՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆՍԳԱՎՍՈՒԻՄ.**

24) Պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումով առաջին անգամն և, վոր հնարավորութիւն և ստեղծվում լիովին իրագործելու սոցիալիստական կուակցութիւնների ծրագրի մինիմումն աշխատանքի պաշտպանութիւնն բնագավառում:

Խորհրդային իշխանությունն որենս-  
դրական կարգով անց ե կացրել յեվ «Աշ-  
խատանքի որենքների Կողբսում» հաս-  
տատել ե բոլոր աշխատավորների համար  
ութժամյա բանվորական որ, վորպես աշ-  
խատանքի մարսիմալ ժամանակ. ընդամին՝  
արտադրության առանձնապես վնասակար  
նյուղերում 18 տարեկան հասակին չհասած  
անձանց, այլեվ հողի տակ զբաղված լեռ-  
նարդյունաբերական բանվորների բանվո-  
րական որր 6 ժամից չպետք ե անցնի.  
բոլոր աշխատավորների համար շաբաթա-  
կան 42 ժամվա անընդհատ հանգիստ. ար-  
տաժամյա աշխատանքների արգելում՝ վոր-  
պես ընդհանուր կանոն. մանուկների յեվ  
մինչեվ 16 տարեկան դեռահասների աշխա-  
տանքից ոգտվելու արգելում. գիշերային  
աշխատանքի յեվ արտադրության առանձ-  
նապես վնասակար նյուղերում աշխատելու,  
այլեվ արտաժամյա աշխատանքի արգելը՝  
կանանց սեռին պատկանող բոլոր անձանց  
յեվ 18 տարեկանը չհասած արական սե-

ռի անձանց համար. կանանց ճանգիստ 8  
շաբաթ ծննդաբերությունից առաջ յեվ 8  
շաբաթ ծննդաբերությունից հետո աշխա-  
տավարծի անընդհատ յեվ լիակատար պա-  
հումով յեվ բժշկական ու դեղային ձրի  
ոգնություն, այլեվ յուրաքանչյուր յերեք  
ժամից հետո բանվորուհիներին կես ժամից  
վոչ պակաս միջոց մանկան կերակրելու  
համար ու լրացուցիչ նպաստ կերակրող  
մայրերին. արհեստակցական միություն-  
ների խորհուրդներից ընտրված աշխատան-  
քի ինսպեկցիա յեվ սանիտարական ինս-  
պեկցիա:

Խորհրդային իշխանությունն որենս-  
դրական կարգով անց ե կացրել ուրիշի աշ-  
խատանքը չչահագործող բոլոր աշխատա-  
վորների լիակատար սոցիալական ապահո-  
վագրություն աշխատունակության կորըս-  
տից յեվ աշխարհումս առաջին անգամ ապա-  
հովագրություն զործազրկությունից՝ իհա-  
շիվ վարձողների յեվ պետության, ապա-  
հովագրվածների լիակատար ինքնավարու-

թյամբ յեվ արհեստակցական միությունների լայն մասնակցությամբ:

Ավելի քան այդ՝ խորհրդային իշխանությունը վորոշ տեսակետից ծրագիր-միջնամուկից դենն և անցել յեվ նույն «Աշխատանքի որոնքների կողքստում» սահմանել բանվորական կազմակերպությունների մասնակցություն վարձի յեվ արծակման հարցեր լուծելու մեջ. մի տարուց վոչ պակաս անդադար աշխատած բոլոր աշխատավորներին միամսյա արծակուրդ՝ ոտնկի վերապահումով. աշխատավարձի պետական կանոնավորում՝ արհեստակցական միությունների մշակած տարիֆների հիմունքով. վորոշ որգաններ, այն և՛ արհեստակցական միություններին յեվ նրանց խորհուրդներին կից բաշխման յեվ հաշվառման բաժանմունքներ, վոր պարտավոր են գործ հայթայթել գործազուրկներին:

Սակայն պատերազմի առաջացրած ծայրահեղ ավերածությունները յեվ համաշխարհային իմպերիալիզմի գրոհը հար-

կադրել են խորհրդային իշխանությանը հետեվյալ շեղումներն անել. թույլ տալ արտաժամյա աշխատանք կիրառել բացառիկ պայմաններում, սահմանափակելով այն տարեկան 50 որով. թույլատրել 14-ից մինչև 16 տարեկան դեռահասների աշխատանքը, սահմանափակելով նրանց աշխատանքի որը 4 ժամով. միամսյա արծակուրդի փոխարեն տալ առ այժմ յերկու շաբաթվա արծակուրդ, յերկարացնել զիշերային աշխատանքների տեվողությունը մինչև 7 ժամ:

Համ. 4. 4. պետք և լայն պրոպագանդա մղի՝ աշխատանքի պաշտպանության բնագավառում ձեռնարկած բոլոր միջոցների յեռանդուն գործադրության մեջ աշխատավորների գործոն մասնակցությունը յերեվան բերելու համար. այդ նպատակով անհրաժեշտ և՛

ա) ուժեղացնել աշխատանքի ինսպեկցիայի կազմակերպության յեվ ընդարծակման գործը՝ բանվորների միջից գործոն

աշխատակիցների ընտրութեան յեւ նախապատրաստութեան միջոցով, ուժեղացնել աշխատանքի ինսպեկցիան մանր յեւ տնային արդյունաբերութեան վրա տարածելու գործը:

բ) տարածել աշխատանքի պաշտպանութիւնն աշխատանքի բոլոր տեսակների վրա (կառուցող բանվորների, ցամաքային յեւ ջրային տրանսպորտի, տնային ծառայողների յեւ գյուղատնտեսական բանվորների):

գ) Վերջապես աշխատանքից հանել փորրահասակներին յեւ շարունակել դեռահասների բանվորական որվա կրճատումը:

Բացի այդ, Համ.Կ.Կ. պետք է ձգտի սահմանել՝

ա) առաջիկայում աշխատանքի արտադրողականութեան ընդհանուր բարձրացմանը զուգընթաց՝ 6-ժամյա մաքսիմալ բանվորական որ, առանց աշխատավարձի նվազեցման, պարտավորեցնելով աշխատավորներին դրանից զատ՝ առանց առանձին

վարձատրութեան, հատկացնել յերկու ժամ արհեստի յեւ արտադրութեան տեսութեանը, պետական վարչութեան տեխնիկայի գործնական ուսուցմանը յեւ զինվորական արվեստին:

բ) աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացնելու համար վարձատրութեան խրախուսիչ սիստեմի մուծումն:

Սոցիալական ապահովութեան բնագավառում Համ. Կ. Կ. ձգտում է լայն պետական ոգնութիւն կազմակերպել վոչ միայն պատերազմի յեւ տարերային դժբախտութիւնների զոհների, այլեւ հասարակական աննորմալ հարաբերութիւնների զոհերի համար. վճռական պայքար է մղում ամեն տեսակի մակարուծութեան ու ծրիակերութեան դեմ յեւ յեւ նպատակ է դնում դեպի աշխատավորական կյանքը վերադարձնել յուրաքանչյուրին, վոր դուրս է ընկել աշխատանքի հունից:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ Ս.ՌՈՂՋՍ.ՊԵՆՈՒ-  
ԹՅԱՆ ԲՆՍ.ԳՍՎԱՌՈՒՄ.

25) Ժողովրդական առողջապահության  
բնագավառում Համ. Կ.Կ. իր գործունեյու-  
թյան հիմք և ընդունում ամենից առաջ  
առողջարար յեվ սանիտարական մի շարք  
միջոցների գործադրությունը, վոր նպա-  
տակ ունի կանխել հիվանդությունների  
զարգացումը: Պրոլետարիատի ղիկտատու-  
րան արդեն հնարավորություն և տվել  
կենսագործելու մի շարք առողջապահական  
յեվ բուժական միջոցներ, վոր անիրագոր-  
ծելի յեն բուրժուական հասարակության  
չրջանակներում դեղագործության, խոշոր  
մասնատիրական բուժարանների, կուրորտ-  
ների ազգայնացում, բժշկական աշխատա-  
վորների պարտադիր աշխատանք յեվ այլն:

Սրան համապատասխան Համ. Կ.Կ. ի-  
րեն մոտավոր նպատակ և դնում՝

ա) վճռականորեն գործադրել հոգուտ

աշխատավորների մի շարք սանիտարական  
միջոցներ, ինչպես՝

I. բնական վայրերի առողջացումը  
(ինամբ գետնի, ջրի յեվ ողի մասին).

II. հասարակական սննդի կազմակեր-  
պումն գիտական հիգիենական հիմքերով.

III վարակիչ հիվանդությունների զար-  
գացումն ու տարածումը կանխող միջոց-  
ների կազմակերպումն.

IV. սանիտարական որենսդրություն.

բ) պայքար սոցիալական հիվանդու-  
թյունների դեմ (~~խորտակում~~, վեներական  
ախտեր, արբեցողություն յեվ այլն).

գ) հանրամատչելի, ձրի յեվ վորա-  
կյալ բուժական ու դեղային ոչնության ա-  
պահովումն:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱ- ԿԱՆ (Բ) ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ

Կոմմունիստական Ինտերնացիոնալի  
սեկցիա

(Ընդունված Համ. Կ. Կ. XIV համադրումարում)

#### 1. ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ՕՆԴԱՄՆԵՐԻ ՄՕՍԻՆ.

1. Կուսակցութեան անդամ համար-  
վում է ամեն վոր, վոր ընդունում է կու-  
սակցութեան ծրագիրը, աշխատում է նրա  
կազմակերպութուններից մեկն ու մեկում,  
յենթարկվում է կուսակցութեան վորոշում-  
ներին չեվ անդամավճար է տալիս:

2. Նոր անդամներ ընդունվում են այն  
թեկնածուներից, վորոնք անցել են բաղա-  
բական գրագիտութեան դպրոցը չեվ սահ-  
մանված թեկնածուական ստաժը:

Թեկնածութունից կուսակցութեան ան-  
դամ ընդունելու կարգը հետեվյալն է.

ա) Սահմանվում է յերեք կատեգորիա

1. Բանվորներ յեվ բանվորների ու գյուղացիների շարքերից դուրս յեկած կարմիր-բանակայիններ:

2. Գյուղացիներ (բացի կարմիր-բանակայիններից) յեվ տնայնագործներ, վորոնք շեն շահագործում ուրիշի աշխատանքը, յեվ

3. Այլք (ծառայողներ յեվ այլն):

Առաջին կատեգորիան բաժանվում է յերկու խմբի:

Առաջին կատեգորիայի առաջին խմբի մեջ են մտնում այն արդյունաբերական բանվորները, վորոնք անընդհատ զբաղված են վարձու ֆիզիկական աշխատանքով:

Առաջին կատեգորիայի յերկրորդ խմբի մեջ մտնում են վոչ-արդյունաբերական բանվորները, բանվորների ու գյուղացիների շարքերից դուրս յեկած կարմիր-բանակայինները յեվ բատրակները:

բ) Առաջին կատեգորիայի առաջին խմբի անձնավորութունները կուսակցու-

թյան մեջ ընդունվելու համար ներկայացնում են մեկ տարվա կուս. ստաժ ունեցող՝ կուսակցության յերկու անդամի յերաշխավորութուն. առաջին կատեգորիայի յերկրորդ խմբի անձնավորութունները— յերկու տարվա կուս. ստաժ ունեցող՝ կուսակցության յերկու անդամի յերաշխավորութուն. յերկրորդ կատեգորիայի անձնավորութունները ներկայացնում են յերկու տարվա կուս. ստաժ ունեցող՝ կուսակցության յերեք անդամի յերաշխավորութուն. յերրորդ կատեգորիայի անձնավորութունները— հինգ տարվա կուս. ստաժ ունեցող՝ կուսակցության հինգ անդամի յերաշխավորութուն:

ՄԱՆՈՔՈՒԹՅՈՒՆ.— Կոմյերիտմութունից առաջին և յերկրորդ կատեգորիայով կուսակցության անդամ ընդունելիս՝ Համ. ԼիՑեՄ կոմիտեյի յերաշխավորութունը հավասար է համարվում կուսակցության մեկ անդամի յերաշխավորության:

գ) Այլ կուսակցութուններից յելածներն ընդունվում են բացառիկ դեպքերում

հինգ տարվա կուս. ստաժ ունեցող՝ կուսակցութեան հինգ անդամի յերաշխափորութեամբ, միմիայն արտադրական բջի յեվ անպայման Կենտկոմի հաստատութեամբ, անկախ ընդունվողի սոցիալական դրութեանից:

ԾԱՆՈթՈՒԹՅՈՒՆ.— Այլ կուսակցութեաններէջ յերաշխափորութեան վերջնական հաստատման իրավունքը Կենտկոմը կարող է վերապահել առանձին յերկրային կոմիտեաներէ և կոմկուսի ազգային կենտկոմներին:

դ) Յերաշխափորութեաններէ ստուգումը նախորդում է ընդունելուն յեվ կուսակցութեան տեղական կոմիտեաների միջոցով և կատարվում:

ե) Կուսակցութեան մեջ ընդունելու հարցը նախապէս քննվում է բջիջում, վերոնշարտում է կազմակերպութեան ընդհանուր ժողովում յեվ ուժի մեջ է մտնում կուսկոմի հաստատումից հետո առաջին կատեգորիայի համար պահանջվում է զավկոմի ու ռայկոմի (բաղաբներում յեվ արդյունաբերական կենտրոններում) հաստատումը:

+

յերկրորդ յեվ յերրորդ կատեգորիաների համար՝ շրջանային (окружной) կամ նահանգական կոմիտեի հաստատումը:

Քաղաքների ռայոնական կազմակերպութեաններում կուսակցութեան մեջ ընդունելու հարցը վճռվում է կուսակցութեան անդամների ընդհանուր ժողովում: Քաղաքային ռայոններում հազարից ավելի կուս. անդամ յեվ թեկնածու լինելու դեպքում՝ ընդունելութեանը կատարվում է ռայկոմի պլենումում, առանց ընդհանուր ժողովի հաստատման:

զ) Յերիտասարդութեանը մինչեվ 20 տարեկան հասակը ներառյալ (բացառութեամբ կարմիր բանակայինների) կուսակցութեան մեջ է մտնում միմիայն Համ. ԿԿՅԵՄ միջոցով:

3. Յերաշխափորողները պատասխանատու յեն իրենց յերաշխափորածների համար յեվ անհիմն յերաշխափորութեաներ տալու դեպքում յենթարկվում են կուսակցական պատժի մինչեվ կուսակցութեանից վտարվելը:

4. Թեկնածուներից կուսակցութեան անդամ ընդունվողների կուս. ստաժը հաշվվում է տվյալ ընկերոջ կուսակցութեան անդամ հաստատվելու մասին համապատասխան բջջի ընդհանուր ժողովի վորոշման որից:

5. Տվյալ ամեն մի կազմակերպութեան յուրաքանչյուր անդամ ուրիշ կազմակերպութեան աշխատանքների վայրը փոխադրվելու դեպքում՝ վերջինս կողմից մտցվում է իր անդամների շարքը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Կուսակցութեան անդամների մի կազմակերպութեանից մյուսը փոխադրվելը կատարվում է համաձայն կուսակցութեան Կենտկոմի սահմանած կանոնների:

6. Վորեվե մեկին կուսակցութեանից վտարելու հարցը վճռվում է այն կազմակերպութեան ընդհանուր ժողովում, վորի անդամ է տվյալ անձնավորութեանը, յեվ հաստատվում է նահանգական (շրջանային) վերահսկիչ հանձնաժողովի կողմից, կամ թե վտարումը ուղղակի նահանգական (շրջա-

նային) վերահսկիչ հանձնաժողովն է կատարում: Վտարման մասին կայացրած վորոշումն ուժի մեջ է մտնում միայն նահանգական (շրջանային) կոմիտեյի հետ վորոշումը համաձայնեցնելուց հետո, ըստ վորում՝ ընդհանուր ժողովի կամ նահանգական Վ. Հ. (շրջ. Վ. Հ.) կողմից վտարելու որից՝ տվյալ անձնավորութեանը հեռացվում է կուսակցական աշխատանքից: Կուսակցութեանից վտարված անդամների վտարման մասին հայտարարվում է կուսակցական մամուլում՝ նշելով վտարման պատճառները:

## II. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՆԴԵՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

7. Բոլոր այն անձնավորութեանները, վորոնք ցանկանում են կուսակցութեանն անդամագրվել, անցնում են թեկնածուական վորոշ ստաժ, վորի նպատակն է՝ նրանց հիմնավորապես ծանոթացնել կուսակցութեան ծրագրի յեվ տակտիկայի հետ յեվ

ստուգել նրանց անհատական հատկութիւնները:

8. Թեկնածուներ ընդունելու կարգը (կատեգորիաների բաժանելը, յերաշխափորութիւնների բնույթն ու ստուգումը, կազմակերպութեան վորոշումն ընդունելութեան մասին և հաստատումը կուսկոմի կողմից) վոչնչով չի տարբերվում կուսակցութեան անդամ ընդունելու կարգից:

9. Թեկնածուական ստաժը սահմանվում է. — առաջին կատեգորիայի համար — վեց ամսից վոչ պակաս, յերկրորդ կատեգորիայի համար — մեկ տարուց վոչ պակաս լեվ յերրորդ կատեգորիայի համար — յերկու տարուց վոչ պակաս:

ՅԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ. — Ուրիշ կուսակցութիւններից յեւածները, անկախ նրանց սոցիալական դրութիւնից, անցնում են յերկու տարեւ թեկնածուական ստաժ:

10. Կուս. անդամութեան թեկնածուները մասնակցում են այն կազմակերպութեան բոլոր դռնբաց ժողովներին, վորի կազմի մեջ են մտնում: Կուս. անդամու-

թեան թեկնածուները կուսակցական ժողովներում վեռական ծայնի իրավունք չունեն, այլ մասնակցում են խորհրդակցական ծայնի իրավունքով միայն:

11. Թեկնածուները տեղային կուսակցական կոմիտեյի զանձարկղը սովորական անդամավճար են մուծում:

### III. ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԿՍ.ԶՄԱԿԵՐՊՁՍ. ԿՍ.Ն ԿՍ.ՌՈՒՅՎԱԾՔԻ ՄՍՍԻՆ.

12. Կուսակցութեան կազմակերպչական կառուցվածքի ղեկավար սկզբունքը դեմոկրատական կենտրոնացումն է (центральизм):

13. Կուսակցութիւնը կառուցվում է դեմոկրատական կենտրոնացման հիմունքներով, ըստ տերրիտորիալ հատկանիշների. վորեվն շրջան սպասարկող կազմակերպութիւնը բարձրագույնն է համարվում բոլոր այն կազմակերպութիւնների նկատմամբ, վորոնք սպասարկում են տվյալ շրջանի այս կամ այն մասը:

14. Բոլոր կուսակցական կազմակերպությունները տեղական հարցերը վճռելու խնդրում ինքնավար են (автономны):

15. Յուրաքանչյուր կազմակերպության բարձրագույն ղեկավար մարմին հանդիսանում է ընդհանուր ժողովը, կոնֆերանսը կամ համագումարը:

16. Ընդհանուր ժողովը, կոնֆերանսը կամ համագումարն ընտրում է կոմիտե, վորը նրանց գործադիր մարմինն է հանդիսանում յեվ ղեկավարում է տեղային կազմակերպության ընթացիկ ամբողջ աշխատանքը:

17. Կուսակցության կազմակերպչական սխեման հետեւյալն է.

ա) ԽՍՀՄ տերրիտորիա – համամիութենական համագումար – Կենտր. Կոմիտե:

բ) Մարզեր (области), հանրապետություններ, նահանգներ – մարզային (յերկրային) կոնֆերանսներ, ազգային կոմկուսակցությունների համագումարներ, նահանգական կոնֆերանսներ – մարզային կոմի-

տեներ (յերկրային կոմիտեներ), ազգային կոմկուսակցությունների կենտկոմներ, նահանգական կոմիտեներ:

գ) Շրջաններ (округа), գավառներ – շրջանային, գավառային կոնֆերանսներ, – շրջանային, գավառային կոմիտեներ:

դ) Վոլոստներ (ռայոններ) – վոլոստային (ռայոնական) կոնֆերանսներ – վոլոստային (ռայոնական) կոմիտեներ:

ե) Ձեռնարկություններ, գյուղեր, կարմիր-բանակային զորամասեր, հիմնարկություններ – բջիջների ընդհանուր ժողովներ – բջիջների բյուրոներ:

18. Յենթարկման, հաշվետվության յեվ կուսակցական բոլոր վորոշումների ընթացքի ու բողոքարկման (оспаривание) կարգը հետեւյալն է. (բարձրագույն ինստանցիայից ղեպի ստորադասը) համամիութենական համագումար, կենտկոմ, մարզային (յերկրային) կոմիտե, ազգ. կոմկուսակցությունների կոնֆերանս, ազգային կոմկուսների կենտկոմ, նահանգային կոնֆերանս յեվ այլն:

19. Կուսակցական աշխատանքի հատուկ ճյուղերի համար համապատասխան բաժիններ են ստեղծվում: Բաժինները գործում են կոմիտեաներին առընթեք յեվ անմիջականորեն նրանց են յենթարկվում: Բաժինների կազմակերպման կարգը վորոշվում է Կենտկոմի հատուկ հրահանգներով:

20. Յյուրաքանչյուր կազմակերպություն իր վերջնական հաստատումից հետո իրավունք է ստանում իր կնիքն ունենալու, սակայն համապատասխան բարձրագույն կուսակցական մարմնի թույլտվությամբ միայն:

IV. ԿՈՒՍԱԿՑՈՒԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒԿԱՆ  
ՀԻՄՆԱԲԵՆԵՐԻ ՄՁՍԻՆ.

21. Կուսակցության գերագույն մարմինը համագումարն է: Հերթական համագումարները հրավիրվում են տարին մեկ անգամ: Արտակարգ համագումարները հրավիրում է Կենտրոնական Կոմիտեն սեփական նախաձեռնությամբ կամ կուսակցա-

կան վերջին համագումարին մասնակցող անդամների ընդհանուր թվի մեկ յերրորդից վոչ պակասի պահանջով: Կուսակցական համագումար հրավիրելու մասին յեվ համագումարի որակարգը հայտարարվում է վոչ ուշ, քան համագումարից մեկ ու կես ամիս առաջ: Արտակարգ համագումարը հրավիրվում է յերկու ամսվա ընթացքում:

Համագումարն որինական է համարվում, յեթե նրանում ներկայացված են կուսակցության վերջին հերթական համագումարում ներկայացված բոլոր կուս. անդամների կիսից վոչ պակաս կուս. անդամներ:

Կուսակցության համագումարի ներկայացուցչական նորմաները սահմանում է Կենտրոնական Կոմիտեն:

22. Յեթե 21-րդ կետում մատնանշված ժամանակալիջոցում Կենտրոնական Կոմիտեն արտակարգ համագումար չհրավիրի, արտակարգ համագումար հրավիրելու պահանջ անող կազմակերպություններն իրավունք ունեն ստեղծելու կազմակերպչական

կոմիտե, վորը համագումար հրավիրելու խնդրում ոգտվում և Կենտրոնական Կոմիտեյի իրավունքներով:

23. Համագումարը — ա) լսում յեվ հաստատում և Կենտրոնական Կոմիտեյի, Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի, Կենտրոնական Վերաստուգիչ Հանձնաժողովի յեվ այլ Կենտրոնական հիմնարկների հաշվետվությունները:

բ) Վերաքննում ու փոփոխում և կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը:

գ) Վորոշում և կուսակցության տակտիկական գիծն ընթացիկ հարցերի նկատմամբ:

դ) Ընտրում և Կենտրոնական Կոմիտե, Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողով, Կենտրոնական Վերաստուգիչ Հանձնաժողով յեվ այլն:

24 Կենտրոնական Կոմիտեն ընտրվում և համագումարի կողմից սահմանվող կազմով:

Կենտրոնական Կոմիտեյի անդամների հեռանալու դեպքում նրա կազմը լրացվում և համագումարում ընտրված թեկնածուներից՝ համագումարի վորոշված կարգով:

25. Կենտրոնական Կոմիտեն համագումարից-համագումար ղեկավարում և կուսակցության ամբողջ աշխատանքը, կուսակցության ներկայացուցիչն և հանդիսանում ուրիշ կուսակցությունների, կազմակերպությունների յեվ հիմնարկների հետ հարաբերության մեջ մտնելիս, կազմակերպում և կուսակցության զանազան հիմնարկներ յեվ ղեկավարում և նրանց գործունեյությունը, նշանակում և կենտրոնական որգանների խմբագրություններ, վորոնք աշխատում են նրա հսկողության տակ, հաստատում և տեղային խոշոր կազմակերպությունների կուսակցական որգանների խմբագիրներին, կազմակերպում ու պահում և հասարակական նշանակություն ունեցող ձեռնարկություններ, բաշխում և կուսա-

կցության ուժերն ու միջոցները յեւ վարում  
ե կենտրոնական զանձարկղի գործերը:

Կենտրոնական Կոմիտեն կուսակցա-  
կան Ֆրակցիաների միջոցով ուղղություն ե  
տայիս խորհրդային յեւ հասարակական  
կազմակերպությունների կենտրոնների աշ-  
խատանքներին:

Կենտրոնական Կոմիտեն առնվազն  
յերկու ամիսը մեկ անգամ ունենում ե մեկ  
պլենար նիստ: Կենտկոմի անդամության  
թեկնածուները Կենտկոմի պլենումի նիստե-  
րին մասնակցում են խորհրդակցական ձայնի  
իրավունքով:

26. Կենտրոնական Կոմիտեն կազմա-  
կերպում ե. քաղաքական աշխատանքների  
համար—Քաղաքական Բյուրո, կազմակերպ-  
չական աշխատանքների ընդհանուր դե-  
կավարության համար—Կազմակերպչական  
Բյուրո, յեւ կազմակերպչական ու գործա-  
դրական բնույթ կրող ընթացիկ աշխատանք-  
ների համար—Քարտուղարություն:

27. Կուսակցական մեկ համագումա-

րից մինչեւ մյուսը՝ Կենտրոնական Կոմիտեն  
հրավիրում ե մի կուսակցական համամիու-  
թենական կոնֆերանս՝ բաղկացած տեղա-  
յին կուսակցական կազմակերպությունների  
ներկայացուցիչներից:

28. Կենտրոնական Կոմիտեն իր աշ-  
խատանքների մասին պարբերաբար տեղե-  
կացնում ե կուսակցական կազմակերպու-  
թյուններին:

29. Կենտրոնական Վերահսկիչ Հան-  
ձնաժողովն ընտրվում ե կուսակցության  
համագումարի վորոշած կազմով:

30. Կենտրոնական Վերաստուգիչ Հան-  
ձնաժողովն ընտրվում ե կուսակցության  
համագումարի վորոշած կազմով. ընտրված-  
ների կուսակցական ստաժը տասը տարուց  
պակաս չպետք ե լինի:

Կենտրոնական Վերաստուգիչ Հանձնա-  
ժողովն ստուգում ե. — ա) Գործերի ընթաց-  
քի արագությունն ու ճշտությունը կու-  
սակցական կենտրոնական մարմիններում  
յեւ Համ. ԿԿ (բ.) Կենտկոմի քարտուղարու-

Թյան ապստամբութի կանոնավորությունը.  
բ) Համ. ԿԿ (բ.) Կենտկոմի դրամարկղը յեզ  
ծեռնարկությունները:

**Վ ՄԱՐԶԱՍԻՆ (ՅԵՐԿԵՍԻՆ) ԿՍՁՄՍ-  
ԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.**

31. Կուսակցական կազմակերպու-  
թյունները Համ. ԿԿ (բ) Կենտկոմի թույլ-  
տվությամբ կարող են միանալ յեզ կազմել  
մարզային (յերկրային) միավորներ: Մարզի  
(յերկրամասի) սահմանները վորոշվում են  
մարզային (յերկրային) կոնֆերանսում յեզ  
հաստատվում են Կենտկոմի կողմից:

32. Կուսակցական կազմակերպու-  
թյունները, վորոնք սպասարկում են ԽՍՀՄ  
յեզ ՌՍՖՖՀ ազգային հանրապետու-  
թյունների (յեզ մարզերի) տերրիտորիան,  
հավասարվում են կուսակցության մարզա-  
յին (կամ նահանգային) կազմակերպու-  
թյուններին, այսինքն՝ ամբողջապես յեն-  
թարկվում են Համ. Կ. Կ. (բ) Կենտկոմին:

33. Մարզային (յերկրային) կոմիտեին

կամ ազգ. կոմ. կուսակցության կենտկոմը)  
ընտրվում են մարզային (յերկրային) կոն-  
ֆերանսում (կամ ազգ. կոմկուսի համա-  
գումարում):

ՄԱՆՈՔՈՒԹՅՈՒՆ.— Յերկրային և նրանց հա-  
վասար կոմիտեների նախազանություն-  
ները կամ բյուրոները հաստատվում են  
Համ. Կ. Կ. (բ) Կենտկոմի կողմից:

34. Կենտրոնական կոմիտեյի հատուկ  
վորոշմամբ այնտեղ, ուր կան մարզային  
տնտեսական մարմիններ (տնտեսական  
խորհրդակցություններ յեզ այլն) կամ կեն-  
տրոններից զգալի չափով հեռու ընկած  
վայրերում ստեղծվում են մարզային բյու-  
րոնի, վորոնց կազմը նշանակում են Համ.  
Կ. Կ. (բ) Կենտկոմը, յուրաքանչյուր ղեկ-  
բում այդ մասին հատուկ վորոշում հա-  
նելով:

Կենտկոմի մարզային բյուրոները պա-  
տասխանատու յեն միայն Համ. Կ. Կ. Կենտ-  
կոմի առաջ:

35. Մարզային (յերկրային) հերթա-

կան կոնֆերանսը (կամ ազգ. կոմկուս. համագումարը) հրավիրում ե մարզային կոմիտեն (ազգ. Կ. Կ. Կենտկոմը)՝ տարեկան մեկ անգամ:

Արտակարգ համագումար հրավիրվում ե մարզային (յերկրային) կոմիտեյի (ազգ. ԿԿ Կենտկոմի) կամ տվյալ մարզի (յերկրի) կազմակերպութունների անդամների ընդհանուր թվի մեկ յերրորդի վորոշմամբ:

Մարզային (յերկրային) կոնֆերանսի (ազգ. կոմկուսի համագումարի) ներկայացուցչական նորմաները սահմանում ե մարզային (յերկրային) կոմիտեն (ազգ. կոմկուսի կենտկոմը):

Մարզային (յերկրային) կոնֆերանսը (ազգ. կոմկուսի համագումարը) լսում յեվ հաստատում ե մարզային (յերկրային) կոմիտեյի (ազգ. կոմկուսի կենտկոմի), վերահսկիչ հանձնաժողովի, վերաստուգիչ հանձնաժողովի յեվ մարզային (յերկրային) հիմնարկների հաշվետվութունները, քննության ե առնում կուսակցական, խոր-

հրրդային, տնտեսական յեվ արհեստակցական աջխատանքի խնդիրները—մարզում կամ հանրապետության մեջ յեվ ընտրում ե մարզային (յերկրային) կոմիտե, մարզային (յերկրային) վերահսկիչ հանձնաժողով մեվ մարզային վերաստուգիչ հանձնաժողով (ազգային կոմկուսների Կենտկոմ, ԿՎՀ յեվ Կ. Վերաստ. Հանձն.):

36. Մարզային (յերկրային) կոմիտե ընթացիկ աշխատանքների համար իր կազմից ընտրում ե բյուրո՝ բաղկացած առնըվազն հինգ հոգուց:

Մարզային (յերկրային) կոմիտեն (ազգ. կոմկուս կենտկոմը) մարզի սահմաններում կազմակերպում ե զանազան կուսակցական հաստատութուններ, ղեկավարում ե նրանց գործունեյութունը, նշանակում ե մարզային (յերկրային) կուսակցական որգանի խմբագրություն, վորն աշխատում ե նրա հսկողության տակ, կազմակերպում ու վարում ե իր՝ համամարզային նշանակություն ունեցող հաստա-

տությունները, ձեռնար'ությունները, մարզի սահմաններում բաշխում ե կուսակցութեան ուժերն ու միջոցները յեզվ վարում ե մարզային (յերկրային) կուսակցական դրամարկղը: Մարզային (յերկրային) կոմիտեն (ազգ կոմկուսի կենտկոմը) կուսակցական ֆրակցիաների միջոցով ուղղություն ե տալիս խորհուրդների, արհմիությունների, կոոպերացիայի յեզվ այլ կազմակերպությունների մարմինների գործունեյությանը: Նմանապես անմիջականորեն ուղղություն ե տալիս Համ. ԼԿՅՆՄ կազմակերպութեան աշխատանքներին յեզվ իր գործունեյութեան մասին մանրամասն հաշիվ ե ներկայացնում Կենտկոմին այն ձեզվով յեզվ այն ժամանակամիջոցում, վոր Համ. Կ. Կ. (Բ) Կենտկոմն ո սահմանել:

Մարզային կոմիտեյի (կամ ազգ. ԿԿ կենտկոմի) պլենումը գումարվում ե վոր ուշ, քան յերկու ամիսը մեկ անգամ:

VI. ՆԱՀԱՆԳՊԱԿՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

37. Կուսակցութեան նահանգական հերթական կոնֆերանսը հրավիրում ե նահանգական կոմիտեն վոչ ուշ, քան տարին մեկ անգամ, իսկ արտակարգ կոնֆերանսները հրավիրվում են նահանգական կոմիտեյի վորոշմամբ կամ նահանգի սահմաններում գործող կու.ս. կազմակերպությունների անդամների ընդհանուր թվի մեկ յերրորդի վորոշմամբ:

Նահանգական կոնֆերանսը լսում յեզվ հաստատում ե նահանգական կոմիտեյի, նահանգական վերահսկիչ հանձնաժողովի, վերաստուգիչ հանձնաժողովի յեզվ այլ նահանգական հիմնարկների հաշվետուությունները, քննութեան ե առնում տվյալ նահանգի կուսակցական, խորհրդային, տրնտեսական յեզվ արհեստակցական աշխատանքի խնդիրները, ընտրում ե նահանգական կոմիտե, նահանգական վերահսկիչ

հանձնաժողով, վերաստուգիչ հանձնաժողով յեւ պատգամավորներ համամիութենական համագումարի համար:

38. Նահանգական կոմիտեն ընտրովում ե կոնֆերանսի կողմից, ըստ վորում նրա կազմի մեջ պիտի մտցվեն ինչպես նահանգական, այնպես ել տվյալ նահանգի ալ խոշոր բանվորական կենտրոնների գործիչները:

Նահանգական կոմիտեն զումարվում ե վոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ: Ընթացիկ աշխատանքների համար նահանգական կոմիտեն իր միջից ընտրում ե բյուրո՝ բաղկացած առնվազն հինգ հոգուց:

Բյուրոյի կազմից առնվազն յերեք հոգի պիտի զատվեն՝ միմիայն կուսակցական աշխատանքի համար:

Նահանգական կոմիտեյի քարտուղարի համար պարտադիր ե յոթը տարվա կուսակցական ստաժ յեւ վերադաս կուսակցական մարմնի հաստատումը (միմիայն ալը վերադաս մարմնի համաձայնու-

թյամբ թույլատրվում ե բացառություն անել կուսակցական ստաժի նկատմամբ):

39. Նահանգական կոմիտեն, մարգային (յերկրային) կոմիտեների կամ Կենտկոմի թույլտվությամբ, հաստատում ե նահանգի զավառային կամ ռայոնական կազմակերպությունները, նահանգի սահմաններում կազմակերպում ե կուսակցական զանազան հիմնարկություններ, ղեկավարում ե նրանց գործունեյությունը, նշանակում ե կուսակցության նահանգական որչանի խմբագրություն, վորն աշխատում ե նրա հսկողության տակ, կազմակերպում ե նահանգական նշանակություն ունեցող ձեռնարկություններ, նահանգի սահմաններում բաշխում ե կուսակցության ուժերն ու միջոցները յեւ վարում ե նահանգական դրամարկղը:

Նահանգական կոմիտեն համապատասխան ֆրակցիաների միջոցով ուղղություն ե տալիս խորհուրդների, արհեստակցական միությունների, կոոպերատիվ

միավորների յեվ ալ կազմակերպությունների գործունեությունը, ինչպես յեվ անմիջականորեն ուղղություն ե տալիս կոմյերիտմիության աշխատանքին: Նահանգական կոմիտեն Կենտկոմի սահմանած ձեւով ու ժամանակամիջոցում հաշվետվություններ ե ներկայացնում Կենտկոմին իր գործունեությունից մասին: Ինքնավար հանրապետությունների ու մարզերի մարզային կոմիտեները հավասարվում են նահանգական կոմիտեին:

40. Նահանգական կոմիտեները կոնֆերանսների միջոցով ազ ժամանակամիջոցում պարբերաբար ինֆորմացիոն զեկուցումներ են տալիս քաղաքային կամ գավառային (ռայոնական) կազմակերպությունների ընդհանուր ժողովներին կամ կոնֆերանսներին. բացի այդ, նահանգական կոմիտեները հրավիրում են ընդլայնած պլենումներ կամ նահանգական խորհրդակցություններ՝ բաղկացած գավկոմների ու ռայկոմների (անմիջականորեն նա-

հանգական կոմիտեին յենթարկվող) ներկայացուցիչներից:

41. Նահանգական քաղաքներում ըստ կարիքի՝ հիմնվում են ռայոնական կազմակերպություններ—գավառային կազմակերպությունների իրավունքներով յեվ անմիջականորեն յենթարկվում են նահանգական կոմիտեին:

VI ՇՐՋԱՆՍՏԵՆ (ОКРУЖНЫЕ) ԿՍՁ-ՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՍՍԵՆ.

42. Կուսակցական շրջանային կոնֆերանսը հրավիրում ե շրջանային կոմիտեն վոչ պակաս, քան տարին մեկ անգամ, արտակարգ կոնֆերանսը հրավիրվում ե համաձայն շրջանային կոմիտեի կամ շրջանի կազմակերպության մեջ մըտնող անդամները ընդհանուր թվի մեկ յերրորդականի վորոշման:

Շրջանային կոնֆերանսը լսում ե յեվ հաստատում շրջանային կոմիտեի, վերահսկիչ հանձնաժողովի, վերաստուգիչ

հանձնաժողովի յեւ շրջանային հիմնարկների հաշվետուությունները, ընտրում եւ շրջանային կոմիտեւ, վերահսկիչ հանձնաժողով, վերաստուգիչ հանձնաժողով յեւ կուսակցութեան համամիութենական համագումարի պատգամավորներ:

43. Կոնֆերանսի կողմից ընտրվող շրջանային կոմիտեյի կազմի մեջ պետք եւ մտցվեն ինչպես շրջանային կենտրոնի, այնպես եւ տվյալ շրջանի այլ խոշոր բանվորական կենտրոնների գործիչները:

44. Շրջանային կոմիտեն գումարվում եւ առնվազն ամիսը մեկ անգամ: Ընթացիկ աշխատանքների համար շրջանային կոմիտեն իր կազմից ընտրում եւ բյուրո՝ բաղկացած առնվազն հինգ հոգուց:

Բյուրոյի կողմից առնվազն յերեք հոգի պիտի զատվեն միմիայն կուսակցական աշխատանքի համար:

Շրջանային կոմիտեյի բարտուղարի համար պարտադիր եւ հինգ տարվա կուսակցական ստաժ յեւ վերադաս կուսա-

կցական մարմնի հաստատումը (միայն այդ վերադաս մարմնի համաձայնութեամբ թույլատրվում եւ բացառութեւն անել ստաժի նկատմամբ):

45. Շրջանային կոմիտեն հաստատում եւ ռայոնական կազմակերպութեւններն ու կուսակցական բջիջները (այնուհետեւ ռայոնական կազմակերպութեւնները հաստատվում են յերկրային կոմիտեւների կամ ազգ. ԿԿ կենտկոմի կողմից), շրջանի սահմաններում կազմակերպում եւ զանազան կուսակցական հաստատութեւններ յեւ ղեկավարում եւ նրանց գործունեյութեւնը, շրջանային կուսակցական որգանի համար նշանակում եւ իմբազրութեւն, վորն աշխատում եւ նրա ղեկավարութեւն յեւ հսկողութեւն տակ, կազմակերպում եւ շրջանային նշանակութեւն ունեցող ձեռնարկութեւններ, շրջանի սահմաններում բաշխում եւ կուսակցութեւն ուժերն ու միջոցները յեւ վարում եւ շրջանային զանձարկը: Շրջանային կոմիտեն համապա-

տասխան ֆրակցիաների միջոցով ուղղութիւնն և տալիս խորհուրդների, արհեստակցական միութիւնների, կոոպերատիվ յեւ այլ միավորների աշխատանքներին, ինչպես յեւ անմիջականորեն ուղղութիւնն և տալիս կոմյերիտմիութեան աշխատանքներին: Երջանային կոմիտեն կենտկոմի սահմանած ձեւով ու ժամանակամիջոցում իր գործունեութեան մասին հաշվետուութիւնն և տալիս մարզային (յերկրային) կոմիտեյին (կամ ազգ. ԿԿ Կենտկոմին):

46. Երջանային կոմիտեները կոնֆերանսների միջոցով և ժամանակամիջոցում պարբերաբար ինֆորմացիոն զեկուցումներ են տալիս քաղաքային ու ռայոնական կուսակցական կազմակերպութիւնները ընդհանուր ժողովին կամ կոնֆերանսին Բացի այդ, շրջանային կոմիտեները հրավիրում են ընդլայնած պլենումներ կաշրջանային խորհրդակցութիւններ՝ բաղկացած ռայկոմների ու խոշոր բջիջների (անմիջականորեն շրջկոմին յենթակա) ներկայացուցիչներից:

47. Խոշոր շրջանային քաղաքներում վերադաս կուսակցական կոմիտեյի թույլտվութեամբ կարող են կազմակերպվել ռայոնական կազմակերպութիւններ՝ նահանգական քաղաքների ռայոնական կոմիտեյի հավասար իրավունքներով:

#### VIII. ԳԱՎԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

48. Գավառային կոնֆերանսը լսում է յեւ հաստատում գավառային կոմիտեյի, վերաստուգիչ հանձնաժողովի, նահանգական վերահսկիչ հանձնաժողովի լիազորի զեկուցումները, քննութեան և առնում գավառի կուսակցական, խորհրդային, տնտեսական ու արհեստակցական աշխատանքների հարցերը, ընտրում է կոմիտե, վերաստուգիչ հանձնաժողով յեւ նահանգական կոնֆերանսի պատգամավորներ: Կոնֆերանսը հրավիրվում է վեց ամիսը մեկ անգամ:

49. Գավառային կոմիտեն ընտրվում է գավառային կոնֆերանսներում: Գավառ-

ռային կոմիտեն իր միջից ընտրում և մի բյուրո՝ բաղկացած վոչ ավելի 5—7 հոգուց, վորոնց թվում պետք և լինեն անվազն յերեք ընկերներ՝ ազատված ամեն տեսակի աշխատանքներից, բացի կուսակցականից:

Գավառային կոմիտեյի բարտուղարի համար պարտադիր և յերեք տարվա կուսակցական ստաժ յեւ վերադաս կուսակցական մարմնի հաստատումը (միմիայն այդ վերադաս մարմնի թույլտվությամբ կարելի յե բացառություն անել ստաժի նկատմամբ):

50. Գավառային կոմիտեն նահանգական կոմիտեյի թույլտվությամբ հաստատում և զավառի վոչուտային յեւ զավմասային կազմակերպություններն ու բջիջները, զավառի սահմաններում կազմակերպում և զանազան կուսակցական հաստատություններ, ղեկավարում և նրանց գործունեյությունը, կազմակերպում և զավառային նշանակություն ունեցող

իր բոլոր ձեռնարկությունները, կազմակերպում և վոչուտային բջիջների ներկայացուցիչների խորհրդակցություններ յեւ վարում և զավառային կուսակցական զանձարկը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Գավառային կուսակցական կոմիտեն կուսակցական գրական նություն և կուսակցական որդան կարող և հրատարակել միմիայն նահանգական կոմիտեյի թույլտվությամբ:

51. Գավառային կոմիտեն զավառի սահմաններում կուսակցական ֆրակցիաների միջոցով ուղղություն և տալիս զավառային գործադիր կոմիտեյի, ինչպես յեւ արհեստակցական կազմակերպությունների, կոոպերատիվ յեւ այլ միավորումների աշխատանքներին, ինչպես յեւ անմիջականորեն ուղղություն և տալիս կոմիտեյի միության կազմակերպությունների աշխատանքին:

**IX. ՎՈՒՈՍՅԱՅԻՆ (ՌԱՅՈՒՆԱԿԱՆ)  
ԿՕԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.**

52. Վոլոստի բարձրագույն մաբմին ե տվյալ վոլոստի կուսակցական անդամների ընդհանուր ժողովը:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.**— Ընդարձակ վոլոստներում, վորտեղ ընդհանուր ժողով հրավիրելը յժվար ե, թույլատրվում ե ընդհանուր ժողովը փոխարինել վոլոստային կոնֆերանսով: Այդպիսի կոնֆերանսներ հրավիրվում են առնվազն յերեք ամիսը մեկ անգամ:

53. Վոլոստային (ուայոնական) ընդհանուր ժողովը հրավիրվում ե առնվազն ամիսը մեկ անգամ: Ընդհանուր ժողովը ա) վճռում ե կուսակցության անդամների ընդունելության ու վտարման հարցերը՝ ներկայացնելով իր վորոշումները վերաբա կուսկոմիտեներին ի հաստատություն, բ) բննության ե առնում յեվ հաստատում ե վոլոստային կոմիտեյի հաշվետվությունը, գ) ընտրում ե վոլոստային

կոմիտե, դ) պատգամավորներ ե ընտրում զավառային յեվ այլ կոնֆերանսների համար, ե) բննում ու հաստատում ե վոլոստային գործադիր կոմիտեյի ֆրակցիայի հաշվետվությունը:

54. Վոլոստային կոմիտեն ընտրվում ե վոլոստի կուս. ժողովում կամ կոնֆերանսում վեց ամիս ժամանակով: Վոլոստային կոմիտեյի բարտուղարների համար պարտադիր ե մի տարվա կուս. ստաժ:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.**— Այն վոլոստներում, վորտեղ 3-ից պակաս գյուղըջիջներ կան, վոլոստային կոմիտե չի կազմակերպվում. գավոսային կոմիտեներն այդ շրջանների վոլոստային կենտրոնի բըջիջներին կարող են հանձնարարել կատարել վոլոստային կազմակերպության առանձին պարտականությունները:

55. Վոլոստային (ուայոնական) կոմիտեն գումարվում ե առնվազն յերկու շաբաթը մեկ անգամ:

56. Վոլոստային (ուայոնական) կոմիտեն ուղղություն ե տալիս ու ղեկավար

րում և վոլոստային (ռայոնի) բոլոր կազմակերպությունների աշխատանքները, կատարում և կուսակցության բոլոր անդամների տոմարագրումը, կազմակերպում և գրականության բաշխում, միտինգներ, դասասխոսություններ յեւլ աչն, կազմակերպում և նոր բջիջներ ու ներկայացնում և գավառային (շրջանային) կոմիտեյին և հաստատություն, վարում և կուսակցության վոլոստային (ռայոնական) դրամարկը, ամիսը մեկ անգամ իր գործունեյության մասին հաշվետվություն և ներկայացնում գավառային (շրջանային) կոմիտեյին, կուսակցական ֆրակցիայի միջոցով ուղղություն և տալիս վոլոստային (ռայոնական) գործադիր կոմիտեյի աշխատանքներին:

#### Մ. ԿՈՒՍԱԿԿՅԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

57. Կուսակցական կազմակերպության հիմքը կուսակցական բջիջն է: Բջիջը հաստատվում և շրջանային, գավառային կամ

ռայոնական կոմիտեյի կողմից՝ առնվազն կուսակցության չերեք անդամների կազմով:

58. Մեծ թվով բանվոր ունեցող խոշոր ձևնարկություններում՝ ամբողջ ձեռնարկությունն ընդգրկող համագործարանային բջիջներում կարող են կազմակերպվել բջիջներ ըստ ցեխերի (ցեխ-բջիջներ), ըստ վորում յուրաքանչյուր առանձին ղեկըում այդ բջիջները հաստատվում են շրջանային կոմիտեյի (գավկոմի) կամ ռայկոմի (քաղաքներում) կողմից:

59. Բջիջն այն կազմակերպությունն է, վորը բանվորա-գյուղացիական մասսաներին կապում և տվյալ վայրի կուսակցական ղեկավար մարմնի հետ: Բջիջն նպատակն է՝ 1) կուսակցության լոզունգներն ու վորոշումները կիրառել մասսաներում. 2) նոր անդամներ գրավել ու նրանց դաստիարակել. 3) աջակցել տեղային կոմիտեյին՝ նրա կազմակերպչական ու ագիտացիոն աշխատանքներում. 4) վորպես

կուսակցական մարմին, ակտիվ կերպով մասնակցել յերկրի տնտեսական ու քաղաքական կյանքին:

60. Ընթացիկ աշխատանքները վարելու համար քիչն ընտրում ե մի բյուրո՝ վեց ամիս ժամանակով:

Բջջի քարտուղարի՝ համար պարտադիր ե առնվազն մեկ տարվա կուսակցական ստաժ. բացառութիւն թույլատրվում ե միմիայն շրջկոմի (գավկոմի) կամ ույկոմի (քաղաքներում) համաձայնութեամբ:

#### XI. ՎԵՐՍՆՍԿԻՋ ՀՍ.ՆՁՆԵԹ.ՈՂՈՎՆԵՐԻ Մ Ս Ս Ի Ն.

61. Համ. ԿԿ. (բ) միասնականութեան ու հեղինակութեան ամրապնդման գործում կուսակցութեանն աջակցելու, բանփոր դասակարգի լավագոյն մասերը կուսակցութեան շարքերը ներգրավելու, կուսակցութեան անդամների կողմից Համ. ԿԿ. (բ) ծրագրի ու կանոնադրութեան խախտման դեմ պայքարելու, ամեն տեսակետից

խորհրդային մարմինների գործունեութեան մեջ կուսակցական գիծն ապահովելու յեվ խորհրդային ու տնտեսական ապարատի լավացման ու պարզացման համար միջոցներ մշակելու նպատակով՝ մարզային (область), յերկրային, նահանգական յեվ շրջանային կոնֆերանսներում ընտրվում են վերահսկիչ հանձնաժողովներ, փորոնք հաշվետու յեն նրանց ընտրող համապատասխան մարմինների առաջ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.- Ծրջանային Վ. Հ. կազմակերպվում են Կենտկոմի ու Համ Կ.Կ. (բ.) ԿՎՀ-ի թույլտվութեամբ:

62. Վերահսկիչ հանձնաժողովների վորոշումները չեն կարող փոխվել համապատասխան կուսկոմների կողմից, բայց ուժի մեջ են մտնում միայն վերջիններիս համաձայնութեամբ յեվ նրանք են, վոր կենսագործում են այդ վորոշումները:

Անհամաձայնութեան դեպքում հարցը միացյալ նիստ ե փոխադրվում: Յեթե կոմիտեյի հետ համաձայնութիւն չի

կայանում, հարցը համապատասխան կուսակցական կոնֆերանսի կամ վերադաս վերահսկիչ հանձնաժողովի կամ կուսակցության համագումարի լուծման և դրվում:

Ա. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՀԱՆՁՆԱԾՈՂՈՎԻ Մ Ա Ս Ի Ն.

63. ԿՎՀ ընտրվում և առավելապես այնպիսի բանվորներից ու դուղագիներէց վորոնք անհրաժեշտ չափի կուսակցական, խորհրդային, տնտեսական կամ անմիջական արտադրական փորձ ունեն: ԿՎՀ այն անդամները, վորոնք նշանակված են անմիջականորեն ԿՎՀ կամ ԲԴՏ ում աշխատելու համար, պետք և ունենան առնվազն տաս տարվա կուսակցական ստաժ: ԿՎՀ այն անդամները, վորոնք աշխատում են տեղային մարմիններում - վոչ պակաս, քան յոթ տարվա ստաժ յեվ դազգյանի բանվորներն ու գյուղացիները հինգ տարվա ստաժ:

64. ԿՎՀ անդամները չեն կարող լինել միաժամանակ նայել Կենտկոմի ան-

դամ յեվ չեն կարող զբաղել վարչական ու տնտեսական պոստեր:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. - Բացառություններ թույլատրվում են յուրաքանչյուր անգամ Համ.Կ.Կ. (բ) Կենտկոմի և ԿՎՀ-ի նախագահության հատուկ թույլտվությամբ:

65. ԿՎՀ պրենումը հրավիրվում և յերեր ամիսը մի անգամ: Պրենումների միջրնթաց ժամանակամիջոցում ԿՎՀ մարմինների ընթացիկ աշխատանքները ղեկավարելու համար կազմվում և նախագահություն՝ բաղկացած 21 անդամից ու իննը թեկնածուից յեվ վերջինիս գործադիր մարմին - բարտուղարություն, ինչպես յեվ կազմվում և ԿՎՀ ի կուսկոլլեգիա - Համ. Կ. Կ. (բ) կուսակցական ետիկայի, կանոնադրության ու ծրագրի խախտման գործերը բնեկու համար:

66. Կուսակցական համագումարներին ու կոնֆերանսներին՝ Համամիութենական ազգ. կոմկուսների յերկրային, մար-

զային, նահանգային, շրջանային, գավառային յեվ այլն, ինչպես յեվ պլենումներին, խորհրդակցություններին, նիստերին ու ժողովներին ԿՎՀ անդամները մասնակցում են խորհրդակցական ծայնի իրավունքով:

Համ. ԿԿ (բ) Կենտկոմի պլենումներին ներկա յեն լինում միայն ԿՎՀ նախագահության անդամներն ու թեկնածուները: Այն դեպքում, յերբ հրավիրվում են Կենտկոմի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումներ, ԿՎՀ անդամները մասնակցում են այդ պլենումներին վճռական ծայնի իրավունքով:

ԿՎՀ նախագահությունը յերեք անդամ ու յերեք տեղակալ է ուղարկում մասնակցելու Կենտկոմի Քաղ. Բյուրոյի աշխատանքներին յեվ հինգ անդամ ու հինգ տեղակալ — մասնակցելու Կենտկոմի Կազմբաժնի ու Քարտուղարության նիստերին՝ խորհրդակցական ծայնի իրավունքով:

67. ԿՎՀ իրավունք ունի իր իրավասության սահմաններում հանձնարարու-

թյուններ անելու կուսակցության բոլոր անդամներին ու կուսկազմակերպություններին:

Բ. Ա. ԶԳ. Կ. Կ. - Ի, ՄԱՐԶԱՅԻՆ (ՅԵՐԿՐԱՔԻՆ), ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՀՄԿԻԶ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

68. Ազգ. ԿԿ ԿՎՀ-ի, մարզային (յերկրային), նահանգական ու շրջանային ՎՀ անդամների յեվ թեկնածուների թիվը վորոշում է Համ. Կ. Կ. (բ) Կենտ. Վ. Հ. համաձայն կազմակերպության գործողության, շրջանի տնտեսության յեվ այլ առանձնահատկությունների:

ՎՀ անդամներն ու թեկնածուներն ընտրվում են գլխավորապես կուսակցական տեսակետից ամենատոկոն (выдержаны) բանվորներից ու գյուղացիներից, ըստ վորում ազգ. կոմկուսերի ԿՎՀ ի յեվ շրջանային (յերկրային) ՎՀ ի համար — առնվազն. յոթ տարվա, իսկ սնացած ՎՀ-ների համար առնվազն հինգ տարվա ստաժ ունեցողներից, վորոնք ունեն կու-

սակցական, խորհրդային յեւլ արհեստա-  
կցական աշխատանքի համապատասխան  
փորձ յեւլ կարող են իրականացնել իսկա-  
կան կուսակցական ու խորհրդային վերա-  
հսկողութիւնը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բացատրութիւններ թույ-  
լատրվում են ՀԱՄԿԿ (բ.) կենտկոմի  
և ԿՎՀ-ի համաձայնութեամբ:

69. ՎՀ-ի անդամները չեն կարող միա-  
ժամանակ լինել նալեւլ կուսկոմի անդամ  
յեւլ չեն կարող գրավել պատասխանատու  
վարչական դիրքեր:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բացառութիւն թույ-  
լատրվում է միայն Համ.Կ.Կ. (բ.) ԿՎՀ-ի  
թույլտվութեամբ:

70. ՎՀ պլենումն ընտրում է նախա-  
գահութիւն յեւլ կուսկոլլեգիա յեւլ առա-  
ջադրում է ԲԳՏ կոլլեգիայի կազմը:

71. ՎՀ անդամներն ու թեկնածուները  
մասնակցում են համապատասխան կուս-  
կոմների պլենումի, կուսկոնֆերանսների յեւլ  
խորհրդակցութիւնների նիստերին, իրենց  
կազմակերպութեան սահմաններում խորհրդ-  
դակցական ձայնի իրավունքով:

ՎՀ նախագահութիւնն իր անդամ-  
ների մի մասին ուղարկում է մասնակցե-  
լու համապատասխան կուսկոմների բյու-  
րոնների նիստերին՝ խորհրդակցական ձայնի  
իրավունքով:

72. Այն դեպքերում, յերբ ՎՀ յեւլ կուս-  
կոմի վորոշումները միմյանցից տարբեր-  
վում են, միացյալ նիստ է գումարվում:  
Համաձայնութեան չգալու դեպքում հարցը  
փոխադրվում է Համ.Կ.Կ. ԿՎՀ, յեթե խնդի-  
րը վերաբերում է ազգային կոմկուսների  
ԿՎՀ-ին, մարզային (յերկրային) ՎՀ-ն յեւլ  
այն նահանգային ՎՀ-ն, վորոնք չեն մըտ-  
նում ազգային կոմկուսների ԿՎՀ-ի կամ  
մարզային (յերկրային) ՎՀ-ի մեջ: Նահան-  
գային յեւլ շրջանային այն ՎՀ ի նկատ-  
մամբ, վորոնք մտնում են ազգային կոմ-  
կուսների ԿՎՀ յեւլ մարզային ՎՀ մեջ, հար-  
ցը փոխադրվում է համապատասխան ազ-  
գային կոմկուսի ԿՎՀ կամ մարզային (յեր-  
կրային) ՎՀ:

73. ՎՀ իր իրավասութեան սահման-

ներում իրավունք ունի հանձնարարություններ տալու կուսակցութեան բոլոր անդամներին յեվ կազմակերպություններին:

Գ. ՎԶ ԼԻՍՏՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

74. ՎԶ մարմինների յեվ կուսակցութեան կազմակերպությունների յեվ բանվորական ու գյուղացիական լայն մասսայի միջով անմիջական ու կենդանի կապն իրականացնելու նպատակով՝ կազմվում են ՎԶ լիազորների ինստիտուտ՝ կուսակցութեան շրջանային յեվ գավառային կազմակերպություններում:

75. ՎԶ լիազորներին շրջանային կամ գավառային կուսկոնֆերանսները, առավելապես հինգ տարուց վոչ պակաս ստաժ ունեցող յեվ կուսակցականորեն ամենից կոփված բանվորներից ու գյուղացիներից յեվ հաստատում են համապատասխան ՎԶ-ները:

ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ցանկալի յե լիազորներին առաջ բաշել ՎԶ-ի անդամների շարքերին

76. Քաղաքական յեվ տնտեսական տնտեսկետներից ամենախոշոր ու նշանակելի ռայոններում ՎԶ լիազորներն ազատվում են բոլոր այլ աշխատանքներից, բացի կուսակցականից, բոլոր մյուս ռայոններում նրանք աշխատում են պաշտոնների համակցությամբ (совместительство):

77. ՎԶ լիազորներն իրավունք ունեն մասնակցելու համապատասխան կուսկոմիտեյի նիստերին, կուսկոնֆերանսներին, ՎԶ խորհրդակցություններին ու նիստերին՝ խորհրդակցական ծայնի իրավունքով:

XII. ԿՍ.ՐՄԻՐ ԲՍ.ՆՍԿԻ ԿՈՒՍԿԱԶՄՍ-ԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

78. Կարմիր բանակում յեվ Կարմիր նավատորմում կուսակցական աշխատանքի ընդհանուր ղեկավարությունն իրականացնում են ԲԳԿԲ-ի (բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի) Քաղաքական Վարչությունը, վորպես Կենտկոմի զինվորական բաժին: ԲԳԿԲ-ի Քաղվարչությունը (ՊՈՒԻ)

իր ղեկավարութունն իրականացնում ե իր կողմից նշանակվող քաղաքաժինների (ճակատների, զինվորական շրջանների, նավատորմների, բանակների, դիվիզիաների), զինկոմիտեների յեվ համապատասխան բանակային կոնֆերանսներում ընտրվող կուսակցական հանձնաժողովների միջոցով:

Բջիջներն ու կուսկոլլեկտիվները կարմիր բանակում յեվ նավատորմում աշխատում են կենտկոմի կողմից հաստատվող հատուկ հրահանգների հիման վրա:

79. Զինվորական շրջանների, նավատորմների յեվ բանակների քաղաքաժինների պետերի համար պարտադիր ե յոթնամյա կուսակցական ստաժ, դիվիզիաների յեվ ջրիգադանների քաղաքաժինների պետերի համար՝ չորսամյա կուսակցական ստաժ:

80. Կուսակցական հանձնաժողովներ վարում են կուսակցության անդամների յեվ թեկնածուների ընդունման յեվ վտարման գործերը յեվ հեանվում են կուսակցության ծրագրի ու կանոնադրության

խախտմանը: Հանձնաժողովի անդամների համար պարտադիր ե հնգամյա կուսակցական ստաժ:

81. Կարմիր բանակում յեվ նավատորմում կուսակցության անդամների ու թեկնածուների նշանակման յեվ տեղափոխության իրավունքը պատկանում ե համապատասխան քաղաքաժիններին:

Ղեկավար կուսակցական աշխատավորների (հրամանատարական յեվ քաղաքական կազմ) տեղափոխումները համաձայնեցնելու կարգը սահմանվում ե Կենտկոմի հրահանգներով:

82. Քաղաքաժինները պարտավոր են սերտ կապ պահպանել տեղական կուսակցական կոմիտեների հետ՝ վերջինների աշխատանքներին քաղաքաժինների ղեկավարների յեվ զինկոմիտեների մշտական մասնակցության միջոցով, ինչպես յեվ կուսկոմներում սխտեմատիկաբար զինվորական մասերի քաղաշխատանքի մասին քաղաք-

մինների պետերի ու զինկոսների զեկուցումներ լսելու միջոցով:

Թեկնածուներ բնդունելու, թեկնածությունից կուսակցության անդամ փոխադրելու, կուսակցական կանոնադրության խախտումների դեմ պայքարելու գործում կուս. հանձնաժողովների աշխատանքի ղեկավարությունը տեղային կուսկոմները յեվ վերահսկիչ հանձնաժողովները կենսագործում են՝ դիվիզիայի յեվ շքրջանային կուս. հանձնաժողովներում կուսակցական աշխատանքի վիճակի մասին սիստեմատիկաբար զեկուցումներ լսելով յեվ այդ կուս. հանձնաժողովներին համապատասխան հրահանգներ տալով:

### XIII. ԿՈՒՍԱԿԿՅՈՒՄՆԵՐԻ ԴԻՍՅԻՊԼԻՆԵ ՄԱՍԻՆ.

83. Խստագույն կուսակցական դիսցիպլինը (կարգապահությունը) կուսակցության բոլոր անդամների ու բոլոր թեկնածուների յեվ բոլոր կուս. կազմակերպու-

թյունների առաջնագույն պարտականությունն է: Կուսակցական կենտրոնների վորոշումը պետք է իրականացնել արագ յեվ ճիշտ կերպով: Միյեվնույն ժամանակ կուսակցության ներսում կուսակցական կյանքին վերաբերող բոլոր վիճելի հարցերի քննությունը միանգամայն ազատ է՝ մինչեվ այդ հարցերի մասին վորոշում ընդունելը:

84. Վերադաս կազմակերպությունների վորոշումները չկատարելուն յեվ կուսակցության հանրային կարծիքով հանցավոր հանաչված այլ վարմունքներին (проступки) հետևվում է. կազմակերպությունների համար՝ հանդիմանություն, ժամանակավոր կոմիտեյի նշանակում բարձրից յեվ ընդհանուր վերացուցակաբրում (կազմակերպության ցրումն): Կուսակցության անդամների համար՝ այս կամ այն տեսակի հանդիմանություն (նկատողություն, կշտամբանք յեվ այլն), հրապարակային հանդիմանություն, ժամանակավոր

հետացում պատասխանատու կուսակցական յեվ խորհրդային աշխատանքից, վրտարում կուսակցությունից, վտարում կուսակցությունից՝ հայտնելով հանցանքի մասին վարչական յեվ դատական մարմիններին: Թեկնածու փոխադրելը, վորպես կուսակցական պատժի միջոց, արգելվում ե:

85. Դիսցիպլինար հանցանքները քրննում են ընդհանուր ժողովները յեվ վերահսկիչ հանձնաժողովները՝ սովորական կարգով, համապատասխան լինտանցիաներում:

#### XIV. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐՍՄԱԿԱՆ

##### ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

86. Յուրաքանչյուր կազմակերպության դրամական միջոցները կազմվում են անդամավճարներից, բարձր կուսակցական կազմակերպությունների նպաստներից (սուբսիդիա) յեվ այլ յեկամուտներից:

87. Անդամավճարները կուսակցության անդամների յեվ թեկնածուների հա-

մար՝ սահմանվում են նրանց աշխատավարձի կես տոկոսից վոչ պակաս: Սահմանվում ե անդամավճարի չափի չորս կատեգորիա՝ համաձայն աշխատավարձի կուպարի. առաջին կատեգորիան վճարում ե կես տոկոս, յերկրորդ կատեգորիան՝ մեկ տոկոս, յերրորդ կատեգորիան՝ յերկու տոկոս, չորրորդ կատեգորիան՝ յերեք տոկոս:

88. Անորոշ աշխատավարձ ստացող անձերի, որինակ, գյուղագիների անդամավճարների չափը սահմանում են տեղային նահանգական կոմիտեները:

89. Բոլորովին ազատվում են անդամավճար տալուց գործազուրկները յեվ սոցիալական ապահովության նպաստով ապրողները (հաշմանդամները յեվ զառամյալները):

90. Մուտքի վճարները զանձվում են թեկնածու ընդունելիս՝ ստացած աշխատավարձի յերեք տոկոսի չափով, յեվ այդպիսի վճարումներից վոչվոր չի ազատվում:

91. Առանց հարգելի պատճառի յերեք ամիս անդամավճարներ չվճարած կուսակցութեան անդամներն ու թեկնածուները կուսակցութեանից դուրս յեկած են համարվում, վորի մասին հայտնվում ե ընդհանուր ժողովին՝ ի զիտութիւն:

92. Անդամավճարների յեվ կուսակցական հատկացումների զանձման կարգը սահմանվում ե հատուկ հրահանգով:

**XV. ՅՐԱԿՅԻԱՆԵՐԸ ՍՐՏԱԿՈՒՍԵ-  
ԿՅԱԿԱՆ ԿՑԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐՈՒՄ.**

93. Վոչ պակաս, քան կուսակցութեան յերեք անդամ ունեցող բոլոր համազումարներում, խորհրդակցութիւններում յեվ ընտրովի մարմիններում (խորհրդային, արհեստակցական, կոոպերատիվ յեվ այլն) կազմակերպվում են ֆրակցիաներ, վորոնց խնդիրն ե՝ բազմակողմանի կերպով ուժեղագնել կուսակցութեան ազդեցութիւնը, կենսագործել նրա քաղաքա-

կանութիւնն արտակուսակցական միջավայրում յեվ կուսակցական վերահսկողութիւնը հիշատակված բոլոր հաստատութիւնների ու կազմակերպութիւնների աշխատանքի վերաբերմամբ:

Ընթացիկ աշխատանքների համար ֆրակցիաները կարող են ընտրել բյուրոներ:

94. Վորեվ ե կազմակերպութեան ֆրակցիային վերաբերող հարցեր կուսակցական կոմիտեյում քննելիս՝ կազմակերպութեան ֆրակցիան իր ներկայացուցիչներն ե ուղարկում համապատասխան կոմիտեյի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

95. Ֆրակցիաներն, անկախ իրենց նշանակութիւնից, ամբողջապես յենթարկվում են համապատասխան կուսկազմակերպութիւններին: Բոլոր այն հարցերում, վորոնց վերաբերմամբ գոյութիւն ունեն համապատասխան կուսակցական կազմակերպութիւնների որինական վորտումներ,

Ֆրակցիաները պարտավոր են խստիվ յեւ  
անշեղ կերպով հետեւել այդ վորոշումնե-  
րին: Կոմիտեն իրավունք ունի Ֆրակցիայի  
կազմի մեջ մտցնել յեւ նրանից հեռացնել  
ամեն մի կուսանդամի՝ անպայման հայտ-  
նելով Ֆրակցիային իր վորոշման պատ-  
ճառները, ընդ ամին յետ կանչելն ու նոր  
անդամ մտցնելը պետք է կատարվի հա-  
մաձայն այն արտակուսակցական մարմնի  
կանոնադրութեան ու կանոնների, վորին  
առնթեր աշխատում է Ֆրակցիան: Իրենց  
ներքին կյանքի յեւ ընթացիկ աշխատանքի  
հարցերում Ֆրակցիաներն ինքնավար են:

Ֆրակցիայի իրավասութեան մեջ մտ-  
նող վորեւի հարցում կուսակցական կոմի-  
տեյի յեւ Ֆրակցիայի միջեւ եյական տա-  
րածայնութիւն ծագելու դեպքում կոմի-  
տեն պարտավոր է կրկին անգամ բննել  
այդ հարցը Ֆրակցիայի ներկայացուցիչ-  
ների հետ միասին յեւ ընդունել Ֆրակ-  
ցիայի անհապաղ կատարմանը յենթակա  
վերջնական վորոշում:

96. Այն կազմակերպութիւններում,  
վորոնց մեջ աշխատում է Ֆրակցիան, բո-  
լոր կարեւորագույն պաշտոնների թեկնա-  
ծուներին նշանակում է Ֆրակցիան՝ հա-  
մապատասխան կուսակցական կազմա-  
կերպութեան հետ միասին: Նույն այս  
կարգով է կատարվում մի պաշտոնից  
մյուսին փոխադրելը:

97. Քաղաքական նշանակութիւն ու-  
նեցող յեւ Ֆրակցիայի բնութեանը յեն-  
թակա բոլոր հարցերը պետք է բննվեն կո-  
միտեյի ներկայացուցիչների մասնակցու-  
թեամբ:

98. Այն հարցերը, վորոնք յենթակա  
յեն Ֆրակցիայի աշխատանքի միջավայր  
հանդիսացող անկուսակցական կազմակեր-  
պութեան լուծմանը յեւ ունեն սկզբունքա-  
յին նշանակութիւն, ինչպես յեւ բոլոր այն  
հարցերը, վորոնց առթիւ կոմմունիստների  
համաձայնեցրած յելույթ է պահանջվում,  
պետք է նախապէս բննվեն Ֆրակցիայի  
ընդհանուր շողովում կամ բյուրոյում:

99. Վորեվե արտակուսակցական կազմակերպության ֆրակցիայում լուծված յուրաքանչյուր հարցի առթիվ ֆրակցիայի բոլոր անդամները տվյալ կազմակերպության ընդհանուր ժողովում պարտավոր են քվեարկել միաձայն: Այս կանոնը խախտողները յեկեթարկվում են պատժի կարգապահական միջոցների սովորական կարգով համաձայն կանոնադրության:

100. Արտակուսակցական մարմիններին սուրնթեր գործող ֆրակցիաներն անմիջականորեն չեն հարաբերվում ստորագրած մարմինների ֆրակցիաների հետ: Իր վորոշումները կուսակցական գծով անցկացնելու անհրաժեշտության դեպքում՝ այս կամ այն ֆրակցիան այդ վորոշումներն իրագործել և տալիս համապատասխան կուսակցական կոմիտեյի միջոցով (կոմիտեյի բարտուղարի յեվ ֆրակցիայի բյուրոյի անդամի ստորագրությունը կրող գրությամբ):

ՀԱՄ. 4. 4. XV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՌԱՆՋԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՌԹԻՎ.

1. Ի փոփոխուսն կանոնադրության, համաձայնութենական կուսակցական համագումարները հրավիրել վոչ պակաս, քան յերկու տարին մեկ անգամ:

2. ԿՎՀ-ի պլենումները հրավիրվում են 3 ամիսը մեկ անգամ, համագումարից համագումար ընկնող ժամանակաշրջանում: ԿՎՀ-ի որգանների բոլոր ընթացիկ աշխատանքները ղեկավարելու համար կազմակերպվում և պրեզիդիում 21 անդամից, 9 թեկնածուից. կազմվում և նույնպես ԿՎՀ-ի կուսկոլլեգիա Համ. 4. Գ. ծրագրի ու կանոնադրության յեվ կուսակցական ետիկայի խախտման գործերը քննելու համար:

3. ԿՎՀ-ի պրեզիդիումը Բաղբյուրոյ յե ուղարկում չորս անդամ յեվ չորս թեկնածու:

4. Կուսակցության անդամները, վորոնք հրաժարվում են վերահսկիչ հանձնաժողովների հարցերին ճիշտ պատասխան

տալուց, անհապաղ հեռացվում են կուսակցութիւնից:

5. Համամիութենական դիսկուսիան այն դեպքում ե միայն համարվում անհրաժեշտ, յեթե՝ ա) այս անհրաժեշտութիւնն ընդունվում ե, սո՛ւնվազն, նահանգական կամ մարզային մասշտաբով տեղական միքանի կուսկազմակերպութիւնների կողմից. բ) յեթե Կ. Կ.-ի ներսււմ, կուսակցութիւն քաղաքականութիւն կարեւորագույն հարցերում բավականաչափ հաստատուն մեծամասնութիւն չկա. գ) յեթե, չնայած վոր Կենտկոմում հաստատուն մեծամասնութիւն կա, վորը վորոշ տեսակետի վրա յե կանգնած, այնուամենայնիվ Կ.Կ.-ն անհրաժեշտ ե համարում ստուգել իր քաղաքականութիւն նշաութիւնը՝ կուսակցութիւն մեջ դիսկուսիա բաց անելով: Ընդ սմին, բոլոր այս դեպքերում համամիութենական դիսկուսիան կարող ե ակսվել ու կենսագործվել համապատասխան վորոշումից նետո միայն:



Գրքեր

43  
22

« Ազգային գրադարան



NL0178766

ԳԻՆՆ Ե 40 ԿՐԴ

